

«Դեղներ և բժշկություն» լրեղեկագիրը հրապարակվում է Դեղների և
բժշկական լրեղներողի վարդապետական կենտրոնում:
Վկայականի համարը՝ 03Ա066290 20.10.2004թ.

Խոմքագրակազմ

Գլխ. խմբագիր՝	դոցենտ, թ.գ.թ. Ա. Արմազյան
Գլխ. խմբագրի տնօղակայ՝	դոցենտ, թ.գ.թ. Գ. Արմազյան
Խմբագիր՝ քարգմանի՝	թ.գ.թ. Գ. Սորիհասյան
Խմբագիր՝	թ.գ.դ. Ն. Միրոնյան,
Օգնական՝	Ա. Ազարյան
Խմբագիր՝ դիզայներ՝	Զ. Դեկորուսյան

Խոմքագրական խորհուրդ

Նախագահ՝	թ.գ.դ. Ռ. Թովհյան
Անդամներ՝	պրոֆ. Է. Ամրոյան, Լ. Ղազարյան

**Вестник «Лекарства и медицина» издается в Научном центре экспертизы
лекарств и медицинских технологий.**

Регистрационный 03Ա066290 20.10.2004 թ.

Редколлегия:

Гл. редактор:	доц., к.м.н. А. Айвазян
Заместитель гл. редактора:	доц., к.м.н. Г. Асланян,
Редактор – переводчик:	к.ф.н. Г. Сукиасян
Редактор:	д.м.н. Н. Мирзоян,
Ассистент:	Ա. Ազարյան
Дизайн и верстка:	Յ. Պետրոսյան

Редакционный совет:

Председатель:	դ.մ.ն. Ա. Տոռչյան
Члены:	проф. Է. Ամրոյան, Լ. Ղազարյան

Խմբագրության հասցեն՝ Երևան, Կոմիտասի պող. 49/4

Адрес редакции: Ереван, пр. Комитаса, 49/4

Հեռ. 23 16 82, 23 08 96

т.ел. 23 16 82, 23 08 96

ՑԱՆԿ

ԴԵՐԱՊԵՏԱՔԱՆԱՌԹՅԱՆ ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	3
ՖՀԱՆՍԻԱՆ ԿԱՍԵՑՆՈՒՄ Է ԴԻԱՆԵ-35-Ի ՎԱՃԱՐԸ 3	
FDA-Ն ՊԱՐԱՏՁՈՒՄ Է ՆՎԱՋԵՑՆԵԼ ԶՈԼՈՒԹԵՄ ՊԱՐՈՒՏԱԿՈՂ ԴԵՂԵՐԻ	
ԴԵՐԱՉԱՓԵՐԸ 4	
EMA-Ի ԿՈՒԽԵՏԵ ԹՈՒՅԱՏՐՈՒՄ Է ԲԵԴԴԵՄ ԱԼԿՈՋՈՒՄ ԶԱՐԱԿԱՍԱՆ ԴԵՂԻ	
ԿԻՐԱԾՈՒՄԸ 5	
ԿԱԼՑԻՏՈՒՆԻ ՊԱՐՈՒՏԱԿՈՂ ԴԵՂԵՐ. ՕԳՈՒՏ-ԿԱՆԳ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 6	
ՀԵՏԱՐԵՐԻ ՓԱՍՏԵՐ 7	
ՄԵՏՖՈՐՄԱՆ ՄԵԾԱՑՆՈՒՄ Է ԿԵՆՍՈՒԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԶՎԱՐԱՆՆԵՐԻ ՔԱՐՑԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ 7	
ՄԻՋՈՒԻՆՆԵՐԻ ՎԱՐԱԿՆԵՐԻ ԲՈՒԺՈՒՄ ՏՐԱՄԱՐԿՈՎԱՅ ՇՐՋԱՆՈՒՄ 9	
ԿԱՐԲԱՏԵԿ ԿՈՒՐՈՄ ՎԱՐՈՐ Է ԱՍՎԵԼ ԱՐՋՅՈՒՆԱՎԵՏ ԼԻՆԵԼ 10	
ՖԻՏՆԵՍԸ ՄԵԾԱՑՆՈՒՄ Է ՍԱՏԻԽՆՆԵՐԻ ԱՋՈՒՑՈՒԹՅՈՒՆԸ 10	
ԴԵՂԵՐԻ ԱՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ 12	
ՏԱԿՐՈՒԽՈՒՄ ՏԵՂԱՅԻՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ. ԶԱՐՈՐՎԿ 12	
ՄՈՒՐԱԳՅԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ 12	
ՖԵԼԱԼԵՖՈՒՆ՝ ՏԵՂԱՅԻՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՄԲ. ԹԱՐԵՐԻ ԱՅՏՈՒՅ 13	
ԷԿԵՐՈՒԽՈՒՄ և ՍԱՄՈՔՍԱԴԻՔՎՅԻՆ ԼՈՒՐՃ ԽԱՆԳՈՒՄՆԵՐԸ 13	
ՆԻԿՈՐԱՆՈՒԼ. ՍԱԾԿԻ և ԼՈՐՋԱԹԱԿԱՆԱԹԵՐԻ ՄԵԾ ԹՎՈՎ ԽՈՑՈՏՈՒՄ 15	
ԷԼԵԿՏՐՈԿԱՊՈՒԼՅԱՑԻՒՄԻՆ ԵՎ ԱԼԿՈՋՈՒՄԸ ԲՈՒԿՄԱՆ ԵՎ ԱՅՐՎԱԾԹԻ ԿԱՆԳ 15	
ՏԻՎԱՆԵՐԻՆ. ԵՐԻԿԱՍՎՅԻՆ ՆՅԱՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԵՎ ՄԱԶԿԱՅԻՆ ԿՈՐՄԱԿԻ 16	
ԱՅՋԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ 16	
ՄԱԶԿԱՅԻՆ ԼՈՒՐՃ ՌԵԱԿՑԻԱՆԵՐԸ ՄԱՏԻՊԵԴԻՆ EMA -ին՝ ԱՏՑԿԱՑՆԵԼՈՒ 16	
ԲԵՆՋՈՒԻԿՁԵՊԻՆ ԽՄԲԻ ԴԵՂԵՐԻ ՎԵՐԱՆԱՅՈՒՄ 16	
ԲԵՐԱՆՈՒԼ ԼՈՒԾԿՈՐ ՊԱՐԱԵՏԱՄՈՒԼ ՀԱԲԵՐ. ԹՈՒՆԱԿՈՒՄԱՆ ՎԱՍԳ 17	
ԵՐԵՒԱՆՎԵՐԻ ՇՐՋԱՑՈՒՄ 17	
ՄԻԱՆՎԱԳ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՓԱԹԵԹԱԿՈՐՈՒՄ. ԶԱԲԱԽԱՐԵՊ ՍԻՆԱԼՆԵՐ 19	
ՑԻՆԿԻ օԲՍԻԴ. ԱՐԵՖԱԿԱՏՆԵՐ ՄԱՍՈԳՐԱՖԻԿԱՅԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ 19	
ԱՊԱՑՈՒՅՅԵՐԻ ՎՐԱ ՀԻՄՎԱՅ ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆ 20	
ԽՈՐԱՆԻՒՏ ԵՐԱՎԵՐԻ ԹՐՈՄԲՈԳ ԱՆՏԱՐԱՋԻ ԿԱՆԱԿՐԵԼՈՒՄ 20	
ՏՈԼԵՐԵՐԻՑՈՒՆ 21	
ՕԳՆՈՒՅՅՈՒՆ ԳՈՐԾՈՂ ԲԺՇԿԻՆ 22	
ՊԱԼԱՆՏՈՎ ՅԻԿԱՆԴԵՐԻ ՀԵՏ ԾՓՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԻՆՔ 22	
ՈՂՈՒԹԵՆԵՄ 25	
ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 27	
ՈՍԿՐԵՐՈ ՄԻԿՐՅՈՒԵԼՈՒ ՈՒՆԿ ՍՈՒԽՆՅ 27	
ՑԵՐԵԿԱՅԻՆ ԼՈՒՅՆ ՎՁԵՑՈՒԹՅՈՒՆ ՀՐԻՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ 27	
ԼԱՎԱՑՆՈՒՄ է ԵՐԵԽԱՅԻ ՏԵՍՈՐՈՒԹՅՈՒՆԸ 27	
ՊԱՏՎԱՍՏՎԱԾ ԵՐԵԽԱՆԵՐԸ ԱՎԵԼԻ ԵՏ ՀԱԿՎԱԾ ՈՐՈՇ 28	
ՅԻԿԱՆԴԵՐԻՑՈՒՅՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆԸ 28	
ԶԱՆԱԳՈՍ ՊԱՏՎԱՍՏԱՆՅՅՈՒԹԵՐԻ ՀԱՍՎԱՑՈՒՅՅՈՒՆՆԵՐԸ ՍՊԱՆՈՒՄ ԵՆ 29	
ԵՐԵԽԱՆԵՐԻՆ 29	
ՄԵՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄՆԵՐԸ 31	
ԶԱՆԱԳՈՍ ՑՈՒՑՈՒՄՆԵՐՈՎ «ԱՐՄԵՆԻԿՈՒՄ» ԴԵՂԻ ՍԱՐԱՎԱԿԱՓԱԿ 31	
ԿԼԻՆԻԿԱԿԱՆ ՓՈՂԶԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ 31	

ԴԵՌԱՋԱՊԱՐԱԿԱՆԻԹՅԱՆ ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՖՐԱՆՍԻԱՆ ԿԱՍԵՑՆՈՒՄ Է ԴԻՎԱՆ-35-Ի ՎԱՃԱՌՔԸ

Ռոբերտ Լովես

30 հունվարի 2013թ.: Ֆրանսիայի Դեղերի և բուժմթերքների առողջապահության անվտանգության ազգային գործակալությունը (ANSM) հայտարարել է, որ պլանավորել է դադարեցնել պղուկային ցանը (acne) բուժելու համար նախատեսված դեղի վաճառքը, քանի որ վերջին 25 տարվա ընթացքում դրա օգտագործումը կապված է անորային թրոմբոէմբոլիայով պայմանավորված մահվան 4 դեպքի հետ:

Համաձայն Դեղերի եվրոպական գործակալության (EMA) տվյալների Diane-35 (Bayer) դեղը (ցիպրոտերոն ացետատ 2մգ+էթինիլէստրատիոն 35մգ) և դրա համակերպերը ֆրանսիայում գրանցված են միայն ակնեն բուժելու համար, իսկ Եվրամիության որոշ երկներում գրանցված են նաև որպես ներքին ընթունման հակաբեղմնավորիչներ:

Բացի դրանից, Diane-35-ը լայնորեն կիրառվում է ոչ գրանցված ցուցումնվ (off-label) որպես հակաբեղմնավորիչ: ԱՄՆ-ի ՄԱՆԴԻ և դեղերի վարչությունը (FDA) Միացյալ Նահանգներում այդ դեղի օգտագործումը չի երաշխավորել:

Ֆրանսիայի կարգավորող մարմնի (ANSM) ներկայիս հայտարարությունը հետևեց Diane-35-ի և դրա համակերպերի օգտագործման ընթացքում անորային թրոմբոէմբոլիայի զարգացման ռիսկը մեծանալու վերաբերյալ տվյալները վերանայելուց հետո: Քանի որ ակնեի բուժման ընթացքում Diane-35-ը դրսնորել է միշտին արդյունավետություն, ուստի բժիշկները պետք է կիրառեն այլընտրանքային բուժում:

ANSM-ն հայտարարում է, որ մտադիր է երեք ամսով կասեցնել Diane 35-ի և դրա համակերպերի վաճառքը: Այդ ընթացքում բժիշկները չպետք է նշանակեն տվյալ դեղը, իսկ հիվանդները չպետք է կտրուկ ընդհատեն Diane 35-ի կիրառումը, այնուհանդերձ, անհրաժեշտ է բուժող բժշկի հետ քննարկել բուժման լավագույն տարրերակը:

Ի պատասխան ANSM-ի գործողությունների՝ Bayer դեղագործական ընկերությունը հայտարարել է, որ Diane-35-ի ռիսկ-օգուտ հարաբերակցության գնահատման փոփոխությունները հաստատող գիտական ապացույցներ չկան:

Հունվարի 28-ին դեղերի եվրոպական գործակալությունը (EMA) հայտարարել է, որ ANSM-ի պահանջով ինքը կվերանայի հարցը՝ արդյոք Եվրամիությունը պե՞տք է սահմանափակի երրորդ և չորրորդ սերնդի ներքին ընդունման համակցված հակաբեղմնավորիչների կիրառումը, որոնց ռիսկայնությունը առաջին և երկրորդ սերնդի դեղերի համեմատությամբ խիստ բարձր է՝ անորային թրոմբոէմբոլիա զարգացնելու առումով:

EMA-ն հայտարարել է, որ ֆրանսիան պահանջում է անցկացնել Diane 35-ի և դրա համակերպերի համաեվրոպական նմանատիպ փորձաբնություն:

Պահանջը ստանալուց անմիջապես հետո EMA-ի դեղագոնության կոմիտեն կսկսի ուսումնասիրել այդ դեղերի ռիսկի և օգուտի հարաբերակցությունը և կներկայացնի համապատասխան հանձնարարականներ:

<http://www.medscape.com/viewarticle/778499>

FDA-Ն ՊԱՀԱՆՁՈՒՄ Է ՆՎԱԶԵՑՆԵԼ ԶՈԼՊԻԴԵՍ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ԴԵՂԵՐԻ ԴԵՂԱՉԱՓԵՐԸ

2013թ. հունվարի 13: ԱՄՆ-ի ՄԱՆԴԻ և դեղերի վարչությունը (FDA) զոլպիդեմ (Ambien, Ambien CR, Edluar, Zolpimist) պարունակող քնարերներ արտադրողներին հայտարարել է ներկայումս երաշխավորված դեղաչափերը նվազեցնելու իր պահանջի մասին:

Նոր տվյալները ցույց տվեցին, որ զոլպիդեմ օգտագործելու ընթացքում որոշ հիվանդների շրջանում առավոտյան ժամերին նկատվում է դեղի բարձր խտություն արյան մեջ, որը կարող է ազդել ուշադրություն պահանջող աշխատանքների, այդ թվում նաև մեքենա վարելու ունակության վրա:

Առավել ցածր դեղաչափով զոլպիդեմի օգտագործումը կհանգեցնի առավոտյան ժամերին արյան մեջ դեղի խտության նվազմանը: Տղամարդկանց համեմատությամբ կանանց շրջանում զոլպիդեմը օրգանիզմից դրւում է բերփում առավել դանդաղ, այդ պատճառով էլ

FDA-ն արտադրողներին խորհուրդ է տալիս դեղի կիրառման հրահանգներում նվազեցնել դեղաչափը նաև կանանց համար: Տվյալները ցույց են տալիս, որ խանգարումների զարգացման ռիսկը մեծ է այն հիվանդների շրջանում, որոնք ընդունում են դանդաղ ձերբազատմամբ դեղաձևերը: FDA-ն անվերապահորեն պահանջում է, որ առողջապահության մասնագետները գգուշացնեն այդ դեղերը օգտագործող իրենց բոլոր հիվանդներին (կանանց և տղամարդկանց) ուշադրության խանգարումներ զարգանալու ռիսկի մասին՝ ներառյալ հաջորդ օրը մեքենա վարելու վտանգը:

FDA-ն տեղեկացնում է արտադրողներին, որ կանանց համար երաշխավորվող դեղաչափերը արագ ձերբազատմամբ դեղաձևերի դեպքում (Ambien, Edluar, Zolpimist) պետք է 10մգ-ից նվազեցնել 5մգ-ի, իսկ դանդաղ ձերբազատմամբ դեղաձևերի դեպքում (Ambien CR) 12,5մգ-ից 6,25մգ-ի:

[http://www.fda.gov/Safety/MedWatch/SafetyInformation/
SafetyAlertsforHumanMedicalProducts](http://www.fda.gov/Safety/MedWatch/SafetyInformation/SafetyAlertsforHumanMedicalProducts)

**EMA-ի ԿՈՄԻՏԵՆ ԹՈՒՅԼԱՏՐՈՒՄ Է ԸՆԴԴԵՄ
ԱԼԿՈԶՈԼԻ ՉԱՐԱՃԱՆՄԱՆ ԴԵՂԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ**

Կարոլին Կասսելս

2012թ. դեկտեմբերի 14: Դեղերի եվրոպական գործակալության (EMA) խորհրդատվական կոմիտեն երաշխավորել է հավանություն տալ ափիննային ընկալիչների ներհակորդ նալմեֆենի (Selinero, H. Lundbeck A/S) շրջանառությանը. դեղ, որը նվազեցնում է ոգելից խմիչքների օգտագործումը ալկոհոլային կախվածություն և չարաշահման բարձր ռիսկ ունեցող մեծահասակ հիվանդների շրջանում, որոնք, սակայն, չունեն ֆիզիկական ախտանիշների դրսնորում և անհապաղ դետոքսիկացիայի անհրաժեշտություն:

Մարդկանց համար դեղորայքային մթերքների կոմիտեն (CHMP) հայտարարել է այն մասին, որ ընդունել է դրական որոշում և երաշխավորում է բույլ տալ այդ դեղի վաճառքը:

Պարզվել է, որ ալկոհոլային հարքածությունը հանգեցնում է մեզոլիմ-բային դօֆամինի արտազատմանը, որն առաջացնում է հուզավառություն (euphoria) և հետևաբար ալկոհոլային կախվածության «դրական ամրապնդում»: Ենթադրվում է, որ նալմեֆենը խոչընդոտում է այդ ազդեցությունը՝ այդպիսով նվազեցնելով ոգելիցի օգտագործումը: Դեղի հաճախաղեակ կողմնակի ազդեցությունները ոչ յուրահատուկ են և ներառում են սրտխառնուր և փսխում, որոշ հիվանդների շրջանում նկատվել են քնի էպիզոդիկ խանգարումներ:

CHMP-ն խորհուրդ է տալիս նաև համակցել դեղի նշանակումը երկարաժամկետ հոգեսոցիալական սատարման հետ, որը նպատակա-ուղղված կլինի բուժման խիստ պահպանման անհրաժեշտությանն ու ոգե-լիցի օգտագործման նվազեցմանը:

Ավելիմ՝ կոմիտեն երաշխավորում է այդ դեղը նշանակել միայն այն հիվանդներին, որոնց շրջանում առաջին գնահատումից 2 շաբաթ անց նկատվում է չարաշահման բարձր ռիսկ:

<http://www.medscape.com/viewarticle/776192>

ԿԱԼՑԻՏՈՆԻՆ ՊԱՐՈՒԱԿՈՂ ԴԵՂԵՐ. ՕԳՈՒՏ- ՎԱՆԳ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Եվրոպա: Կալցիտոնին պարունակող դեղերի օգուտ-վտանգ հարաբերակցությունը գնահատելու արդյունքում Մարդկանց համար դեղորայքային մթերքների կոմիտեն (CHMP) երաշխավորում է կալցիտոնին պարունակող դեղեր նշանակել միայն կարճատև բուժման համար, քանի որ կան դրանց երկարատև կիրառման և քաղցկեղի զարգացման վտանգի ապացույցներ:

EMA-ի CHMP-ն նաև խորհուրդ է տալիս բժիշկներին չնշանակել կալցիտոնին պարունակող դեղեր՝ քիչ ցողաշիթ (spray) դեղաձևով՝ օստեոպրոքր բուժելու համար, քանի որ այդ ցուցումով դրանց օգուտը չի գերակշռում վտանգը:

Հստ մյուս ցուցումների (Պեջետի հիվանդություն, պարանեոպլաստիկ գերկացիումարյունություն, ոսկրային հյուսվածքի սուր կորստի կանխարգելում՝ օգուտի և ոխսկի հարաբերակցությունը դրական է: Այնուամենայնիվ, դեղը պետք է նշանակել նվազագույն կարծ ժամանակահատվածում և նվազագույն արդյունավետ դեղաչափով (քացառությամբ Պեջետի հիվանդության դեպքում հանդիպող հատուկ հանգամանքների):

Համաձայն EMA-ի երաշխավորումների՝ կալցիտոնինը պետք է կիրառվի միայն լուծույթի ձևով ներարկման և ինֆուզիայի համար՝ հետևյալ ցուցումներով՝

- ուկրազանգվածի սուր կորսարի կանխարգելում հանկարծահաս անշարժության դեպքում. բուժման նախընթացիկի լուսությունը 2 շաբաթ է, առավելագույնը՝ 4 շաբաթ,
- Պեջետի հիվանդություն, եթե բուժման այլրենիքանքային մերողներև անկիրառելի են. սովորաբար բուժման լուսությունը չպետք է գերազանցի 3 ամիսը,
- գերկալցիումարյունություն չարորակ նորագոյացությունների դեպքում:

Անշարժացման պատճառով ուկրազանգվածի սուր կորուստը կանխարգելելու համար, ինչպես նաև օստեոպրոքի դեպքում կալցիտոնինով հարմարածղական ուղղու բուժումը պետք է ունենա սահմանափակ ժամկետ՝ 2-4 շաբաթ: Պեջետի հիվանդության դեպքում խորհուրդ է տրվում այն կիրառել կարճատև կուրսով: Բուժումը չպետք է գերազանցի երեք ամիսը. եթե չկան հատուկ հանգամանքներ, երբ այն կարող է երկարել մինչև 6 ամիս:

ՇԵՏԱԳՐՈՒԹԻՒՆ ՓԱՍՏԵՐ

ՄԵՏՖՈՐՄԻՆԸ ՄԵԾԱՑՈՒՄ Է ԿԵՆՍՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԶՎԱՐԱՆՆԵՐԻ ՔԱՂՑԿԵԴԻ ԴԵՊՔՈՒՄ

Նոր հետազոտությունների արդյունքների համաձայն՝ շաբարային դիաբետը բուժելու համար հաճախ կիրառվող դեղով կարող է մնջացնել կենսունակությունը ձվարանների քաղցկեղով կիվանդների շրջանում:

Հետազոտության հեմինակները հայտնում են, որ չնայած տվյալները միայն ենթադրում են մետֆորմին ընդունելու և կիվանդության ելքի բարեկավման միջև փոխկապվածության առկայությունը (պատճառային կապը չի կարող գնահատվել), այնուամենայնիվ դրանք ցույց են տալիս, որ մետֆորմինի ընդունումը ինքնուրույն նպաստում է ձվարանների քաղցկեղով կիվանդների կենսունակության բարեկավմանը:

Cancer ամսագրում 2012թ. դեկտեմբերի 3-ին on-line տպագրված հետազոտությունը ցույց տվեց, որ կիվանդության համար յուրահատուկ հնգամյա կենսունակությունը նկատելիորեն բարձր էր ձվարանների քաղցկեղով կիվանդների շրջանում, որոնք ընդունել են մետֆորմին՝ ի տարբերություն դեղը շընդունած կիվանդների (67% և համապատասխանաբար 47%, P =007):

Հեղինակները նշում են, որ դեպք-ստուգում ռետրոսպեկտիվ (հետահայաց) ուսումնասիրությունների արդյունքները հաստատում են ձվարանների քաղցկեղի դեպքում մետֆորմինի կինհիկական հետազս ուսումնասիրությունների անհրաժեշտությունը:

Հետազոտության տվյալները նախնական են, ոխսկ-օգուտ հարաբերակցությունը չի գնահատվել: Ներկայում ձվարանների քաղցկեղի դեպքում խորհուրդ չի տրվում մետֆորմին կիրառել, քանի որ ուսումնասիրությունները կատարվել են թիվով կիվանդների շրջանում, և անհրաժեշտ է անցկացնել լայնածավալ դիպվածային կինհիկական փորձարկումներ: Ներկայիս պրակտիկայի ելակետային փոփոխություն կարող են առաջացնել միայն այդ հետազոտությունների դրական արդյունքները, որոնք կցուցադրեն մետֆորմինի արդյունավետությունը:

Նախնական հետազոտությունները հավաստում են այդ տվյալները

Ինչպես վայորոր հայտարարվել է Medscape Medical News-ի կողմից, մի շարք հետազոտություններ գնահատել են մետֆորմինի կիրառումը քաղցկեղի որոշակի տեսակների կարգավորման և կանխարգելման տեսակետից, այդ թվում շագանակագեղձի, ենթաստամոքսային գեղձի և բորերի մանրաքաղցի քաղցկեղների դեպքում:

Ձվարանների քաղցկեղի վերաբերյալ վայորոր հրատարկած հետազոտություններում (Obstet Gynecol. 2012;119:61-67) 5-ամյա կենսունակության ցուցանիշը (կիվանդության առաջնաբարացի դադարեցման ժամանակահատված) մետֆորմին օգտագործող շաբարային դիաբետով կիվանդների շրջանում եղել է 51%, իսկ չօգտագործողների շրջանում՝ 8%: Շաբարային դիաբետ չունեցող

հիվանդների շրջանում, որոնք օգտագործել են մետֆորմին, այդ ցուցանիշը հավասարվել է 23%-ի ($P = 0,03$): 5 տարվա ընթացքում կենսունակության ընդհանոր մակարդակը մետֆորմին ստացած դիաբետով հիվանդների շրջանում կազմել է 63% և 23% մետֆորմին չստացածների շրջանում: Դիաբետ չունեցող հիվանդների շրջանում, որոնք օգտագործել են մետֆորմին, այդ ցուցանիշը կազմել է 37% ($P = 0,03$):

Մանրամասներ հետազոտությունից

Բժիշկ Շրիդիսարդ և նրա գործընկերները հետազոտել են ձվարանների քաղցկեղով հիվանդներին, որոնք բուժվել են Մայո Լինիկայում և 1995-2010թթ. ընթացքում ստացել են մետֆորմին:

Հաստ վերջնական վերլուծության՝ ձվարանների էպիթելիային քաղցկեղով կանանց խմբում մետֆորմինով բուժված 61 կանանց արդյունքները (դեպքերի խումբ) համեմատվել են մետֆորմին չստացած 178 կանանց արդյունքների հետ (ստուգիչ խումբ):

Ձվարանների էպիթելիային քաղցկեղով հիվանդների 2 խմբերում էլ համապատասխանություն է եղել ախտորոշման ժամանակի, հիվանդության փուլերի առումով՝ համաձայն Գինեկոլոգիների և մանկաբարձների միջազգային ֆեդերացիայի (FIGO) և վիրաբուժական ցիտոռեղուկցիայի կարգավիճակի (օպտիմալը ընդդեմ ենթաօպտիմալի):

Ձվարանների քաղցկեղով հիվանդների խմբում միջին կենսունակությունը կազմել է 5,5 տարի (95% հավաստելիության միջակայք [ՀՄ], 4,1-7,5 տարի), ստուգիչ խմբի դեպքում այն կազմել է 4,1 տարի: 5-ամյա կենսունակության ցուցանիշը ստուգիչ խմբի համեմատությամբ բարձր էր դեպքերի խմբում (73%-ն ընդունել 44%-ի, թեսա log-rank $P = 0,002$): Տարիի, ախտորոշման թվականի, մարմնի զանգվածի, հիվանդության փուլի, հյուսվածքաբանական և քիմիաբուժուման ցուցանիշները ճշտելուց հետո միայն հիվանդության փուլը (հարաբերական ռիսկը [ՀՌ] 8,6) և մետֆորմինի օգտագործումը (ՕՐ 2,7) շարունակում էին մնալ որպես կենսունակության անկախ կանխորոշիչներ:

Առանց ախտադարձի կենսունակության միջինը ստուգիչ խմբի համեմատությամբ բարձր էր դեպքերի խմբում (32-ի փոխարեն 22 ամիս, $P = 0,04$): Առանց ախտադարձի կենսունակության 5-ամյա ցուցանիշը ողջ խմբում կազմել է 52%: Հիվանդության փուլի, հյուսվածքաբանական և քիմիաբուժուման ցուցանիշները ճշտելուց հետո մետֆորմինը շարունակում էր մնալ որպես կենսունակության անկախ կանխորոշիչ:

<http://www.medscape.com/viewarticle/775730>

**ՄԻԶՈՒՂԻՆԵՐԻ ՎԱՐԱԿՆԵՐԻ ԲՈՒԺՈՒԾ
ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ ՇՐՋԱՆՈՒՄ. ԿԱՐՃԱՏԵՎ ԿՈՒՐՍԸ
ԿԱՐՈՂ Է ԱՌԱՎԵԼ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԼԻՆԵԼ**

Լարի Հանդ

2012թ. դեկտեմբերի 4: Տղամարդկանց շրջանում միզուղիների՝ պահի քան 7-օրյա վարակի (ՄՎ) հակամիկրոբային բուժումը (ՀԲ) կարող է չնվազեցնել հիվանդության վաղ և ուշ ախտադարձության (recidivum) զարգացման ռիսկը բուժման առավել կարճատև կորուսի համեմատ, սակայն կարող է պայմանավորված լինել *Clostridium difficile* վարակի մեծացման ռիսկով:

Բժշկական գիտուրյունների դրսությունը նշումը Դմիտրի Դրենոստյան Միննեավոլիսի առողջապահության համակարգում զբաղվում է Միննեսոտի վետերանների խնդիրներով (ՎԽ), և նրա գործընկերները վերաբննեցին տղամարդկանց շրջանում ՄՎ-ի 33 336 դեպք (85,2%, հիվանդների միջին տարիքը 67,9 տարեկան) (հիվանդության միջազգային դասակարգումը, իններորդ վերանայում, ՄՎ, ըստ համապատասխանության՝ հակամիկրոբային դեղերը խմբավորելով):

1772 հիվանդների (ընդհանուր թվի 4,5%-ը) շրջանում զարգացել են վաղ ախտադարձներ իսկ 4041-ի դեպքում (10,3%) ուշ ախտադարձներ: Հակամիկրոբային բուժման տևողությունը տատանվել է 1-17 օր (միջինը՝ 10 օր, հավանական շեղումները՝ 7-10 օր), 11 666 (35,0%) հիվանդներ բուժման ստացել են 7 օր և պակաս, իսկ 21 670-ը (65,0%)՝ 7 օրից ավելի:

Կիրառելով հետքնացի բազմագործոն լոգիստիկ վերլուծությունը՝ հետագոտողները հայտնաբերեցին, որ բուժման տևողությունը կապված չէ վաղ ախտադարձների հետ (հնարավորությունների հարաբերությունը՝ [ՀՀ] 1,01, հավաստելիության միջակայք՝ [ՀՄ] 95%), 0,90 1,14): Այնուամենայնիվ, նրանք նկատել են նաև, որ առավել երկարատև բուժմանը կարճատև բուժման համեմատ պայմանավորված էր ուշ ախտադարձների հաճախականությունների մեծացմամբ (10,8% >7 օրվա փոխարեն 8,4% ≤ 7 օր, P <0,001), և այդ կապը շարունակում էր հավաստի մնալ բազմագործոն վերլուծությունից հետո (ՀՀ 1,20, 95% ՀՄ, 1,10-1,30):

Բազմագործոն վերլուծության դեպքում ստուգումն անցկացվում է ըստ տարիքի, ուղեկցող հիվանդությունների, ՄՎ-ի զարգացման ենթադրվող գործողի ռիսկի, կիրավողի հակամիկրոբային դեղերի, բուժման տևողության և անամնեցում *Clostridium difficile* վարակի առկայության:

Միազգործն և բազմագործոն վերլուծության ընթացքում ստացված տվյալներն այն մասին, թե երկարատև բուժմանը պայմանավորված էր ուշ ախտադարձների զարգացման ռիսկի մեծացմամբ, անսպասելի էին:

Clostridium difficile վարակը ախտորոշվել էր 144 (0,4%) դեպքերում բուժումը սկսելուց 90 օր հետո՝ 1-89 օրերի սահմաններում (միջին նշանակությունը [ստանդարտ շեղումը]՝ 38,7 [26,9] օր): Բուժման երկարատև կորուսը, կարճատև կորուսի համեմատ, պայմանավորված էր *Clostridium difficile* վարակի զարգացման ռիսկի մեծացմամբ (0,5%-ի փոխարեն 0,3%, P =0,02) միազգործոն վերլուծության

դեպքում, սակայն այդ տարբերությունը նշանակալի չէր բազմագործոն վերլուծության դեպքում:

Դիտարկվեց, որ ՄՎ-ի դրվագների մեծ մասի բուժման դեպքում տղամարդ հիվանդների շրջանում հիմնականում օգտագործվել է 2 դեղ՝ ցիալովիլուկացին և տրիմետոպրիմ-սուլֆամեթրոքսազոլ, բուժման տևողությունը հիմնականում երաշխափորված 7-14 օրերի սահմաններում էր (84,4% հիվանդ) և միայն հիվանդների մի մասի շրջանում (15,6% հիվանդ)՝ այդ սահմաններից դուրս:

Սասանագետների կարծիքով, այս տվյալները կասկածի տակ են առնում ամբողատոր պայմաններում տղամարդկանց ՄՎ-ի երկարատև բուժման դերը:

Arch Intern Med. Հրապարակված է օճ-լայն 03 դեկտեմբերի 2012թ.:

ՖԻՏՆԵՍԸ ՄԵԾԱՑՆՈՒՄ Է ՍԱՏԻՆԵՐԻ ԱՃՌԵՑՈՒԹՅՈՒՆԸ

Լիզա Նախգգուլան

28 Առյեմբերի 2012թ.: Վաշինգտոն (ԱՄՆ, Կոլումբիայի ֆեդերալ մարզ): Կոհորտային նոր պրոսպեկտիվ փորձարկումները ցույց տվեցին, որ ստատիններով բուժուման համակցումը բարձր ֆիզիկական բեռնվածության հետ կարող է մեծացնել դիախիլեմայով հիվանդների կենսունակությունը:

Միջին հաշվարկով 10 տարվա տևողությամբ ուսումնասիրությունների ընթացքում, որոնք անցկացվել են քիշկ Պիտեր Ֆ. Կոկկինոսի և նրա գործընկերների կողմից (Վետերանների խնդիրների քժշկական կենտրոն, Վաշինգտոն, Կոլումբիայի ֆեդերալ մարզ) դիախիլեմայով հիվանդ նախկին զինվորականների շրջանում, ցույց տրվեց, որ ստատիններով բուժումը ու բարձր ֆիզիկական ակտիվությունը անվախ կլիմիկական այլ բնորոշումներից, նշանակալի չափով նվազեցնում են մահացությունը:

Սա տվյալ խնդրին նվիրված առաջին հետազոտությունն է, և ներառում է յուրահատուկ ու կլիմիկական նշանակություն ունեցող տեղեկատվություն: Ստատիններով դեղաբուժման համակցումը ավելի քան 5 ՄԵՏ-ով մեծացած ֆիզիկական ակտիվության հետ (նյութափոխանակային համարժեք/ՄԵՏ-ը մեծություն է, որը պատիկ է բրվածնի յուրաքանչյուր հանգստի վիճակում՝ արտահայտված նկատմամբ) ավելի է նվազեցնում մահացության ռիսկը, քան այս նույն մեթոդները առանձին-առանձին:

Անվախ նրանից՝ հիվանդին նշանակված եղել են ստատիններ, թե ոչ, հետազոտվող մասնակիցներից ֆիզիկապես մարզվածների շրջանում, ի տարբերություն ֆիզիկապես չմարզվածների, ողջ ուսումնասիրության ընթացքում նկատվել է ընդհանուր մահացության նվազում 60-70%-ով:

Հետազոտողները կոչ են անում ֆիզիկական ակտիվությանը առավել ուշաբնություն հասկացնել: Վարժությունների նշանակումը պեսոր է ոչ միայն ստվորական դաշնա, այլև ֆիտնեսին օժանդակելու համար պահանջվեն բուժաշխատողների, հասարակության և կառավարության համատեղ ջանքեր:

Ստատիններով բուժումը շատ կարևոր է, իսկ ֆիզիկական բավարար

ծանրաբեռնվածությունը լավացնում է կենսունակությունը և բուժման լրացուցիչ լավագույն մերոդ է կամ այլնտրանքային այն դեպքում, երբ անհնար է ստատիմենտի ընդունումը:

Ստատիններ ընդունած մարզված հիվանդների շրջանում, ի տարբերություն չմարզված հիվանդների, նկատվում է մահացության նվազում 70%-ով

Բժիշկ Կոկինսի և նրա գործընկերների կողմից Պալո-Ալտոյում (Կալիֆորնիայի նահանգ) և Վաշինգտոնում (Կոլումբիայի ֆեդերալ մարզ) ուսումնակիրվել են դիսլիպիդայով 10 043 վետերանի (միջին տարիքը 58,8 տարեկան), որոնք 1986-2011 թթ. անցել են ֆիզիկական ծանրաբեռնվածության տոկրանության թեստ: ՄԵՏ-ի հիման վրա նրանք բաժանվել են չորս խմբերի, որը կատարվել է ծանրաբեռնվածության թեստավորման ընթացքում, և ուր կարգավիճակների՝ համաձայն մարզվածության վիճակի և ստատինների օգտագործման: Նախնական վերջնակետը ընդհանուր մահացությունն էր, որը ճշտվել էր ըստ տարիքի, մարմնի զանգվածի, էքսիլիկական ծագման, սեռի, սիրտանորային հիվանդությունների առկայության, սիրտ-անորային գործուների ռիսկի և սիրտ-անորային դեղներ օգտագործելու: Մահացությունը ուսումնափրկվել է մինչև 2011 թ. դեկտեմբերի 31-ը:

Միջին հաշվով 10-ամյա ուսումնափրությունների ընթացքում 2318 մասնակից մահացել է: Մահացության ռիսկը ստատիններ ընդունած անձանց շրջանում 18,5% է (935/5046), ի տարբերություն 27,7%-ի (1386/4997) նրանց շրջանում, ովքեր ստատիններ չեն ընդունել ($p<0,0001$): Ստատիններ ընդունած հիվանդների շրջանում մահացության ռիսկը նվազում էր՝ պայմանավորված մարզվածության աստիճանով: Հատ մարզված անձանց շրջանում (>9 ՄԵՏ, $n=694$) հարաբերական ռիսկը ($\Delta\Omega$) կազմել է 0,30 ($p<0,0001$) ի տարբերություն թից մարզվածների (≤ 5 ՄԵՏ, $\Omega\Delta=1,00$, $n=1060$):

Ստատիններ ընդունած մարզված հիվանդների շրջանում, ի տարբերություն ստատիններ ընդունած չմարզված հիվանդների, նկատվում է մահացության նվազում 50%-ով

Փոքր-ինչ մարզված անձանց $\Delta\Omega$ -ի ուսումնափրությունները ստատիններ չօգտագործող մասնակիցների շրջանում ($n=1024$) կազմել է 1,35 ($p<0,0001$), և այդ ցուցանիշը մեծ արագությամբ նվազել է մինչև 0,53 ($p<0,0001$) նրանց շրջանում, ովքեր եղել են լավագույն մարզվածակում ($n=1498$): Ի տարբերություն ստատիններով բուժվող պակաս մարզված մասնակիցների:

Բացի դրանից, մասնագետները նշում են, որ դիսլիպիդմիայով ոչ բոլոր հիվանդներին են նշանակվում ստատիններ, և ոչ բոլոր հիվանդներն են ընդունում ստատիններ, թեև նրանց նշանակվել է այն:

Ֆիզիկական ակտիվության մեծացումը, որն անհրաժեշտ է էական պաշտպանիչ ազդեցության համար, հնարավոր է միջին տարիքի և մեծահասակ հիվանդների համար միջին չափի ֆիզիկական ակտիվության՝ հատկապես քայլիք, այգեգործության և մարմնամարզության միջոցով:

<http://www.medscape.com/viewarticle/775201?src=nldne>

ԴԵՇԵՐԻ ԱՆՎՏԱՍԳՈՒԹՅՈՒՆ

ՏԱԿՐՈԼԻՄՈՒՄ ՏԵՂԱՅԻՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ. ՉԱՐՈՐԱԿ ՆՈՐԱԳՈՅԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2012թ. մարտին Ֆրանսիայի Դեղերի կարգավորիչ գործակալությունը հրատարակեց դեղազգոնության ազգային կոմիտեի՝ 2011թ. նոյեմբերին կայացած նիստերի արձանագրությունները, որոնք նվիրված էին քաղցկեղի զարգացման հետաձգված ռիսկերի խնդրներին՝ պայմանավորված **տակրոլիմուսի** տեղային դեղաձևերի կիրառմամբ. իմունադեպրեսանտ, որը երաշխավորված է էկզեմայի որոշ տեսակների բուժման համար:

Վերլուծությունը ներառել էր 14 չարորակ նորագոյացություն, որը գրանցված է եղել Ֆրանսիայում 2008թ. մարտից մինչև 2010թ. դեկտեմբերը: 8 դեպք գրանցվել եր Ֆրանսիայի դեղազգոնության բազայում, 6-ը՝ ըստ արտադրողների տվյալների:

Դիտարկվել է մաշկային լիմֆոմայի 4 դեպք, 2-ը՝ Խոջկինի լիմֆոմայի, 1-ը՝ ոչ Խոջկինի լիմֆոմայի, 2-ը՝ խրթեային քջիշների կարցինոմայի, 2-ը՝ հիմքային քջիշների կարցինոմայի, 1-ը՝ մելանոմայի, 1-ը՝ արգանդի վզիկի խրթեային քջիշների կարցինոմայի և 1-ը՝ Կապոչի սարկոմայի: Հիվանդներից տասներեքը մնահասակներ էին:

Ուզ աշխարհում գրանցված են 78 նմանատիպ դեպքեր (բացառությամբ Դեղերի կարգավորման ֆրանսիական բազայի 8 դեպքի)՝ Խոջկինի լիմֆոմայի 11 դեպք, ոչ Խոջկինի լիմֆոմայի 12 դեպք, լիմֆոնայի (ոչ սպեցիֆիկ) 11 դեպք, Տ-քջային լիմֆոմայի 3 դեպք, մաշկի քաղցկեղի 18 դեպք և այլ տեսակի քաղցկեղների 23 դեպք:

Սկսած 2008-ից՝ հրատարակվել են համաճարակաբանական երեք ուսումնասիրություններ: Դրանցից երկուսում ցոյց էր տրված, որ Տ-քջիշների լիմֆոմայի ռիսկը մոտավորապես 5 անգամ մեծանում է այն հիվանդների շրջանում, որոնք բուժվել են տեղային օգտագործման տակրոլիմուսով (95% հավաստելիթյան միջակայք [ՀՄ] 2,5-11,8 և 2-14,2): Երրորդ ուսումնասիրությունը ցոյց տվեց լիմֆոմայի զարգացման առավել բարձր ռիսկի առկայությունը՝ ընդհանուր պուպուլյացիայի համեմատ:

Պրակտիկայում. Ձի կարելի հիվանդներին ռիսկի ենթարկել: Հստ տվյալների՝ 2012թ. սկզբներին տեղային օգտագործման տակրոլիմուսի կիրառումը առողջիկ էկզեմայով հիվանդներին ենթարկում է ծայրահեղ ռիսկի, և այն պետք չէ օգտագործել:

*Translated from Rev Prescrire May 2012; 32 (343):361
Prescrire International October 2012/VOLUME 21, N 131:239*

ՖԵՆԻԼՖՐԻՆ՝ ՏԵՂԱՅԻՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՄ. ԹՈՔԵՐԻ ԱՅՏՈՒՅՑ

Ավտորալիա: Բժշկական ապրանքների վարչությունը (TGA) առողջապահության մասնագետներին զգուշացնում է հնարավոր լուրջ համակարգային կողմնակի ազդեցությունների, այդ բարում բոքերի այտուցի մասին այն դեպքում, եթե տեղային օգտագործման ֆենիլէֆրինը կիրառվում է բետա-ադրենապաշարիչների հետ համատեղ:

Ֆենիլէֆրին – ալֆա-ադրենալինախրամիչը կիրառվում է ԼՕՌ-ի պրակտիկայում վիրարուժական միջամտությունների ժամանակ որպես անորասեղմիչ և աչքի վիրահատությունների ընթացքում որպես բբալայնիչ միջոց:

Նկարագրված են բոքերի այտուցի զարգացման դեպքեր, երբ նախա-վիրահատական նախադիմաստոգրդման (premedication) համար օգտագործվել է ֆենիլէֆրին: Մեծ մասամբ դա կատարվում է զարկերակային գերճնշման դեպքում այն կարգավորելու նպատակով բետա-ադրենադրենապաշարիչների նշանակումից հետո՝, որը հավանաբար պայմանավորված է տեղային օգտագործման ֆենիլէֆրինի համակարգային ներծծմամբ:

Վիրարուժական միջամտության ընթացքում ֆենիլէֆրինով նախադեղատոգրման արդյունքում 4-ամյա հիվանդի մահվան տեղեկություն ստանալուց հետո Նյու-Յորքի նահանգի առողջապահության դեպարտամենտի կողմից մշակվեցին վիրարուժական պարակտիկայում տեղային օգտագործման ֆենիլէֆրինի կիրառման ուղեցույցներ: Համաձայն այդ ցուցումների՝

- լինային օգտագործման ֆենիլէֆրինի համակարգային կողմնակի ազդեցությունների հավանականությունը նկազեցնելու համար այն անհրաժեշտ է նշանակել նկազագոյն ազդեցության դեղաչափով,
- ալֆա-ադրենադիմականի համակարգային արյան հոսք և ներծծվելու պարմառով առաջացած գերձնումը բուժելու նկարակով իրորուրդ չի դրվում նշանակել կալցիումային անցույնիների պաշարիչներ և բիլա-ադրենադրենապաշարիչներ,
- ֆենիլէֆրինը (կամ ցանկացած դեղ) վիրահատական դաշտում կիրառելուց առաջ անէսթեզիոլոգները պետք է խորհրդակցեն բուժող բժշկի հետ:

Medicines Safety Update Vol. 3, No. 2, April 2012

ԷՎԵՐՈԼԻՍՈՒԾ և ՍՏԱՄՈՔՍԱԴԻՔԱՅԻՆ ԼՈՒՐ ԽԱՆԳԱՐՈՒՄՆԵՐԸ

ԱՀԿ-ի ազդանշանը: Էվերոլիմուսը իմունաճնշիչ և հակառաօքային դեղ է, որը կիրառվում է օրգանների փոխապատվաստման դեպքում և ուռուցքաբանության մեջ:

2003-ից էվերոլիմուսը ԵՄ-ի երկրներում երաշխավորվել է փոխապատվաստվող օրգանների .մերժման ռեակցիանե (rejection) կանխարգելելու նպատակով,

2009-ից՝ տարածված և կամ երիկամաքջային քաղցկեղի մետաստազները և ենթաստամոքսային գեղձի նեյրոէնտրկինային ուռուցքները բուժելու, իսկ 2011-ից՝ տորերոզային սկլերոզով պայմանափորված՝ ենթականդիմալային հսկայաքջային աստրոնցիտոմի (SEGA) վիրաբուժական բուժնան շնորարկվող հիվանդների համար:

2011թ. նոյեմբերի դրույթամբ VigiBase գլոբալ բազայում գրանցվել է ստամոքսալիքային ուղղու (ՍԱՈՒ) խանգարումների վերաբերյալ 636 հաղորդում, որոնք պայմանափորված էին էվերոլիմուսի կիրառմամբ: Կան նաև 47 անհատական հաղորդումներ ՍԱՈՒ-ի լուրջ կողմնակի ազդեցուրյունների (ստամոքսալիքային արյունահոսություն, խոցեր, արյունային փսխումներ և մելենա) վերաբերյալ: Հաղորդումները ստացվել են 8 տարրեր երկրներից՝ 27-ը՝ ԱՄՆ-ից, 11-ը՝ Գերմանիայից, 2-ական՝ Մեծ Բրիտանիայից, Կանադայից և Իտալիայից ու մեկական՝ Ավստրիայից, Չեխիայից և Շվեյչարիայից:

Ընդհանուր առմամբ գրանցվել է 13 մահվան դեպք, ինչպես նաև հաղորդվել է, որ դրանցից իննորս (երեք՝ ստամոքսալիքային արյունահոսություն, երկուս՝ խոց) էվերոլիմուսի հետ օգտագործվել է նաև սորաֆենիր կամ բեվացիզումար:

Այս դեպքերի մեծ մասը ավելացվել է բազայի տվյալներում 2010-2011թ., որը մասսամբ կարելի է բացատրել վերջին երկու տարիների ընթացքում էվերոլիմուսի կիրառման ցուցումների ընդլայնմամբ: Հաղորդումներում ներառված են նաև սորաֆենիր, բեվացիզումար և հակամակարդիչներ, որոնցից յուրաքանչյուրը կարող է առաջանել ստամոքսալիքային արյունահոսություն, մինչեւո հնարավոր մյուս ազդեցուրյունների մասին տեղեկատվությունը բացակայում է: Ստամոքսալիքային բունայնությունը այնպիսի դրսերումներում, ինչպիսիք են արյունահոսությունը և խոցերը, էվերոլիմուսի կիրառման հրահանգի կողմնակի ազդեցուրյունների բաժնում հիշատակված չէ: Այդուհանդերձ, Vigibase-ի էվերոլիմուսի կիրառմամբ պայմանափորված՝ լորջ անբարենպատ ազդեցուրյունների (ՍԱՈՒ արյունահոսություն և խոցեր) մասին անհատական հաղորդումները առիր են տալիս կասկածելու դեղի և այդ ազդեցուրյունների զարգացման միջև եղած կապի առկայությանը:

Սասանագետները նշում են, որ հիվանդների տիպաբանությունը տարբեր էր (տաստանվում էր փոխապատվաստումից մինչև ուռուցքաբանություն): Ըստ հիվանդներ ընդունել են և այլ դեղեր, այդ պատճառով էլ ստամոքսալիքային բունայնության զարգացման ավտենցիալ և անհատական ռիսկային գործուների մասին տվյալներ այդ հաղորդումներից չեն կարող գրանցվել: Այդուհանդերձ, ՍԱՈՒ-ի խանգարումներից մահացության դեպքերի տոկոսը էվերոլիմուս ընդունող հիվանդների շրջանում մեծ է:

Ըստ կինիկական տարբեր ցուցումների՝ էվերոլիմուսի օգտագործման ընդլայնումը՝ ապագայում նաև այլ դեղերով համակցմամբ (օր.՝ բեվացիզումարով և սորաֆենիրով), բելազրում է այդ դեղի հնարավոր ռիսկի և սպասելի օգուտի հարաբերակցության զնահատման անհրաժեշտությունը: Հետևական անհրաժեշտ է զգնություն՝ ցանկացած, նախկինում անհայտ խանգարումների մասին տեղեկատվություն ձեռք բերելու գործում:

ՆԻԿՈՐԱՆԴԻԼ. ՄԱՇԿԻ և ԼՈՐՁԱԹԱՂԱՆԹՆԵՐԻ ՄԵԾ ԹՎՈՎ ԽՈՅՈՏՈՒՄ

Վաճառքի թույլտվության երկարացումը անընդունելի է:

2012թ. հունվարին Ֆրանսիայի Դեղերի կարգավորիչ գործակալուրյան դեղազգոնության կոմիտեն վերլուծեց խոցոտման զարգացման դեպքերը, որոնք վերագրվել են նիկորանդիլ հակահեղձուկային դեղի կիրառմանը: Ֆրանսիայում 2008-2011թթ. ընթացքում հայտարարվել են մաշկի և լորձաթաղանթների խոցոտման 45 դեպք, որոնցից 57%-ը հոսպիտալացման պատճառ դարձան: Նշվել են բերանի խոռոչի, ենզի կամ կոկորդի խոցի 23, մաշկային ծածկույթի 14, հետանցքի շրջանում խոցերի 8, ստամոքս-12-մատնյա աղիքի և շագանակագեղձի խոցերի 4-ական, սեռակա օրգանների 2 դեպք, քի լորձաթաղանթի 1 և շորցքերանային շրջանի 1 դեպքեր:

Խոցոտման հետևանքները ներառել են ցավ, վերքերի լավացման դանդաղում, դժվարություններ սնունք ընդունելիս, քաշի կորուստ, դեպքեսիա, արյունահոսություն, արսցեսներ, ֆիստուլաներ և վիրարուժական միջամտություն:

Հիվանդների միջին տարիքը եղել է 80 տարեկանը: Նրանք դեղը ընդունել են օրական 10-40մգ դեղաչափով, որը համապատասխանել է նիկորանդիլի կիրառման հրահանգին: Խոցերի ի հայտ գալու ժամանակը տատանվել է մի քանի ամսից մինչև մի քանի տարի (59% դեպքերում 1 տարուց ավելի): Դեպքերի 42%-ի ախտահարումը պահպանվել է 4 ամսից ավելի, այնքան, մինչև չեր ենթադրվում նիկորանդիլի հնարավոր դերը:

Նկատի ունենալով նիկորանդիլի աննշան բուժիչ արժեքը՝ այդ կորմնակի ազդեցություններն անընդունելի են: Նիկորանդիլը պետք է դուրս մղվի դեղագործական շուկայից առանց հետազոտ ձգձգումների:

Translated from Rev Prescribe 2012; 32 (344):441

Prescribe International November 2012/Volume 21, N 132:267

ԷԼԵԿՏՐԱԿՈԱԳՈՒՅՑԱՅԻՆ ԵՎ ԱԼԿՈՇՈԼԸ ԲՈՆԿՄԱՆ ԵՎ ԱՅՐՎԱԾՔԻ ՎՏԱՆԳ

Թույլ տվեք սպիրտ պարունակող հականեխիչները չորանան

2011թ. մարտին Ֆրանսիայի Առողջապահության բուժմթերքների գործակալությունը շեշտել է բռնկվելու և այրվածքային վնասվածքների վտանգը սպիրտ պարունակող հականեխիչներ գործածելու դեպքում մաշկը էլեկտրահոսանքով (էլեկտրադանակ) դադելուն նախապատրատելու նպատակով:

2009թ. Ֆրանսիայի գործակալությունը արդեն հաղորդել է նման 20 դեպքերի առկայության մասին, այդ թվում 3 հիվանդի մասին, որոնց անհրաժեշտ էր կատարել մաշկի փոխպատվաստում: Ակսած 2009-ից գործակալությունը ստացել էր տասնյակ նման հաղորդումներ:

Պրակտիկայում. անհրաժեշտ է նախքան էլեկտրադանակը գործածելը

սպիրտ պարունակող հականեխիչները չորանալու հնարավորություն տալ՝ բռնկվելու վտանգը կամ էլեկտրական կայծերի առաջացումը կասեցնելու նպատակով: Պետք է նաև համոզված լինել, որ դեղը չի կուտակվել մաշկի ծալքերում կամ հիվանդի մահճակալի տակ:

Translated from Rev Prescire 2012; 32 (344):441

Prescire International November 2012/Volume 21, N 132: 269

ՏԻԱՆԵՊՏԻՆ. ԵՐԻԿԱՍԱՅԻՆ ՆՅԱՐԴԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ՄԱՇԿԱՅԻՆ ԿՈՂՄԱԿԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դետագա վաճառքի թույլտվությունը անընդունելի է:

Ֆրանսիայի դեղագգոնություն ազգային կոմիտեն վերլուծեց դեղագործական շուկայում արդեն 22 տարի գոյություն ունեցող **տիանեպտինի** կողմնակի ազդեցությունների, բացառությամբ շարաշահումների և կախվածության, մասին հաղորդումները: Դրանք ներառել են 426 լորջ և 501 վտանգավոր կողմնակի ազդեցություններ:

Առավել հաճախադեպ լորջ խախտումները եղել են լյարդի ախտահարումները (82 դեպք):

Հաղորդումները ներառել են նաև նյարդահոգեկան կողմնակի ազդեցությունների մասին տվյալներ՝ ցնցումների նոպաներ և էպիլեպսիա (17 դեպք), ակաման շարժումներ և արտաքրքային խանգարումներ (3 դեպք), ինքնասպանություն և սուիցիդի փորձեր (14 դեպք), գիտակցության շփոթներ (15 դեպք), ցնորժներ (9 դեպք) և անհանգուտացնող գրգռվածություն (5 դեպք):

Գրանցվել են մաշկային 40 ծանր վնասվածքներ, որոնք ներառել են բշտիկային ցանի զարգացման 11 դեպք, որոնցից 5-ը մահացու ելք են ունեցել: Նշված են եղել նաև ծանր թերնատրիումարյունության, 30 սիրտ-անորթային ծանր խանգարումների, 14 թրոմբոցիտոպենիայի, 8 ազրանուլոցիտոզի և այլ դեպքեր:

Կողմնակի ազդեցությունների այս դրսնորումները անհանդուրմելի են հատկապես նրանով, որ տիանեպտինը դեղաբանական շուկայում առկա հակադեպեսանատների համամատությամբ որևէ առավելություն չունի:

Translated from Rev Prescire 2012; 32 (344):441

Prescire International November 2012/Volume 21, N 132: 269

ՄԱՇԿԱՅԻՆ ԼՈՒՐՃ ՌԵԿՑԻԱՆԵՐԸ ՍՏԻՊԵՑԻՆ ԷՄԱ -ԻՆ՝ ԱՆՁԿԱՑՆԵԼՈՒ ԲԵՆՁՈՂԻԱԶԵՊԻՆԻ ԽՄԲԻ ԴԵՇՐԻ ՎԵՐԱՆԱՅՈՒՄ

Կարողին Կասելս

11 ԽՈՆՎԱՐԻ 2013թ.: Բենզոդիազեպինների խմբի հաճախ կիրառվող տետրազեպամ դիմից առաջացած մաշկային լորջ ռեակցիաների վերաբերյալ անհանգուտությունը ստիպեց Դեղերի ենրոպական գործակալությանը (EMA):

անցկացնելու դեղի կրիտիկական վերագնահատում:

Ֆրանսիայում մաշկային լուրջ ռեակցիաների զարգացման դեպքերի մասին մի քանի հաղորդումներ ստանալուց հետո Դեղերի ֆրանսիական գործակալությունը վերուժեց բոլոր կողմնակի ազդեցությունները, հատկապես Ֆրանսիայի դեղազգոնություն ազգային բազայում գրանցված մաշկային ռեակցիաները: Վերանայումը ցույց տվեց, որ մյուս քենցողիազեպինների համեմատ՝ տետրազեպամի՝ մաշկային կողմնակի ազդեցությունների տոկոսը մեծ է: Բացի դրանից, անհանգստություն առաջացրեց մի քանի դեպքերի՝ Սրիվենս-Զոնստանի համախտանիշի, բունավոր էպիներմային նեկրոլիզի, բազմաձև էրիթրեմայի և էնզինոֆիլիայով ու համակարգային ախտանիշներով համախտանիշների զարգացման ծանրության աստիճանը:

Դեղը ցուցված է մկանային կծկանքը բուլացնելու համար հիմնականում ուսմատոլոգիական հիվանդություններու հիվանդներին:

Դեղերի եվրոպական գործակալությունը կվերանայի տետրազեպամ պարունակող դեղերի անվտանգության, հատկապես մաշկային ռեակցիաների, բոլոր հասանելի տվյալները՝ գնահատելու այդ դեղերի օգուտ-փուանգ հարաբերակցության վես ցանկացած ազդեցությունը:

Դեղերի եվրոպական գործակալությունը առողջապահության բոլոր մասնագետներին, հիվանդներին և հասարակական կազմակերպություններին կոչ է անուն տրամադրել այս խնդիրին առնչվող տվյալներ՝ կիրառելով գործակարության օն-լայն տարրերակը (online stakeholder submission form).

Տետրազեպամ պարունակող դեղերը երաշխավորվել են կիրառման համար (ազգային ընթացակարգեր անցնելուց հետո) Եվրամիության մի շարք երկրներում, ներառյալ Ավստրիան, Բելգիան, Բուլղարիան, Չեխիական Հանրապետությունը, Ֆրանսիան, Գերմանիան, Լատվիան, Լիտվան, Լյուքսեմբուրգը, Լեհաստանը, Ռուսիանիան, Մրլվակիան և Խաղանիան, և տարրեր անուններով հասանելի են թժկի դեղատոնսով:

Ֆրանսիայում տետրազեպամ պարունակող դեղերը օգտագործման թույլատրված են եղել՝ սկսած 1967թ., և բավականաշափ համախ կիրառվող քենցողիազեպիններու են:

http://www.medscape.com/viewarticle/777524?nid=26803_1341&src=nldne

ԲԵՐԱՆՈՒՄ ԼՈՒԾՎՈՂ ՊԱՐԱՅԵՏԱՍՈՒԻ ՀԱԲԵՐ. ԹՈՒՆԱԿՈՐՄԱՆ ՎՏԱՆԳ ԵՐԵՒԱՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ

Պարագետամոլը երեխաների շրջանում ցավը թեթևացնող և ջերմիչեցնող ընտրության դեղ է: Բուժիչ դեղաչափերով օգտագործելիս դեղի կողմնակի լուրջ ազդեցությունները հազվադեպ են և հիմնականում ներառում են ավերգիկ ռեակցիաներ: Սակայն գերդեղաչափման դեպքում պարացետամոլը խիստ բռնավոր է, երբեմն առաջացնում է լյարդի մահացու երով ախտահարումներ: Հետևապես խիստ կարևոր է կանխել երեխաների կողմից այն պատահական կուլ տալը: Կանխարգելման եղանակային մերողներից մեկը այնպիսի փարեթների օգտագործումն է, որոնք երեխաների համար դժվար կլինի բացելը:

Որոշ դեղաձևեր խիստ ռիսկային են երեխաների համար, օրինակ՝ պարագետանոլի մանկական հեղուկ դեղաձևերը ներքին ընդունման համար, որոնք երեխաների կողմից պատահական բացվելուց պաշտպանված չեն հատուկ խցաներով:

Ըեղիսայի Մունաբանության կենտրոնը անցկացրել է պարագետանոլը պատահական խմելու 203 դեպքի հետահայց (retrospectiv) ուսումնասիրություն, որը բացահայտեց այդ հարերի, այդ թվում և բերանում լուծվող հարերի առաջնային վտանգը:

Պարացետամոլ՝ բերանում լուծվող հարերի դեղաչափը ներքին ընդունման դեպքում կրկնակի մեծանում է:

Տվյալ հետահայց ուսումնասիրությունը վերլուծեց 2003թ. հունիսից մինչև 2009թ. օգոստոսն ընկած ժամանակաշրջանում կենտրոնի կողմից գրանցված թունավորման բոլոր դեպքերը, ըստ որոնց՝ 6 տարեկանից փոքր երեխաները պատահարար խմել են բերանում լուծվող կամ կարծր հարեր, որոնք պարունակել են 500մգ պարացետամոլ: Այդ դեպքերում պարացետամոլը միակ ներառված դեղն էր, և դրա օգտագործած դեղաչափը հայտնի էր:

Երեխայի կողմից պարացետամոլի ընդունած դեղաչափի միջին ցուցանիշը կրկնակի մեծ էր բերանում լուծվող հարերի համար: Կարծր՝ 500 մգ-անոց հարերի ընդունումը նշվում էր 187 դեպքերում, երբ երեխաները, որոնց միջին տարիքը 2 տարեկանն էր, միջին հաշվով կու են տվել 2,5 հար, որը մոտավորաբես համապատասխանում է պարացետամոլի 100մգ/կգ դեղաչափին: Բերանում լուծվող պարացետամոլի 500մգ-անոց հարերի կիրառման 16 դեպքերում երեխաները (միջին տարիքը 3 տարեկան) միջին հաշվով կու են տվել 4,6 հար, որը համապատասխանում է պարացետամոլի մոտ 150մգ/կգ դեղաչափին: Մասնագիտները ենթադրում են, որ քիչ հետ շփումից հարերի շուտ փխրվելը և առավել ևս դրանց հաճելի համը, որը բռնարկում է պարացետամոլի դաշնությունը, նպաստում են մեծարանակ օգտագործմանը:

Պրակտիկայում. անհրաժեշտ է պարացետամոլը պահել երեխաներին անհասնելի տեղում և պահանջել համապատասխան փարեթներ: 2012թ. մարտի մեկի դրույյամբ Ֆրանսիայի դեղագործական շուկայում գոյություն ունեն բերանում լուծվող պարացետամոլի մի քանի դեղեր՝ 250 և 500 դեղաչափով: Ծանր հետևանքներ ունեցող գերեզմանական դեպքերից երեխաներին պաշտպանելու համար դեղը անհրաժեշտ է պահել նրանց համար անհասնելի տեղում: Հարազատները և խնամող անձնակազմը պետք է զգուշացված լինեն դեղի թունավորության մասին, ներառյալ հանրահայտ դեղերը, որոնք օգտագործելիս անհրաժեշտ նշանակություն չի տրվում դրանց վտանգավորությանը:

Դեղագործական ընկերությունների պարտականությունը հիվանդի համար փարերի ձևի անվտանգությունն ապահովելն է, իսկ դեղերի կարգավորիչ գործակարությունները պետք է երաշխավորեն հիվանդների և նրանց հարազատների անվտանգությունը:

*Translated from Rev Prescrire July 2012; 32 (345): 532
Prescribe International November 2012/Volume 21, N 132:275*

ՄԻԱՆՎԱԳ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՓԱԹԵԹԱՎՈՐՈՒՄ. ՀԱՃԱԽԱԴԵՊ ՍԽԱԼՆԵՐ

2012թ. սկզբներին Ֆրանսիայի Թունաքանության կենտրոնը հրատարակեց պրոսպեկտիվ (ընթացիկ) ուսումնասիրության տվյալներ առանց դեղասովոսի տրվող միանվագ օգտագործման փաթեթավորմանը դեղերի կիրառման սխալների վերաբերյալ: 2 ամսագլ ընթացքում գրանցվել է 169 սխալ: Դեղերի 79%-ը վերաբերել է 5 տարեկանից փոքր երեխաներին: Մեծ մասամբ նշվել են ներմուծման ներքրային և 14% ներակնային ուղիները:

Օգտագործվող դեղեր էին հիմնականում հասկանելիչները (քլորիենիդին կամ բրոպրու), որոնք ստվորաբար ներմուծվել են նշանակված նաստրիմի քլորիդի ֆիզիոնդույի փոխարեն: Ներքրային ներմուծման 133 դեղերում գերակշռել են մաշկային և ներակնային հակամեխիչների օգտագործումը (93%): Աչքի մեջ ներմուծման 24 դեղերում նշվել են մաշկի հակամեխիչները, իսկ երբեմն էլ՝ ականջի մեջ ներմուծվող հակարիտութիկներ: Գործնականում բռնոր սխալ ներմուծումները կատարվել են տնային պայմաններում: 3 ամսականից փոքր երեխաների շրջանում առաջացել է հիմնայացինն թքաբրոք (հաստատված ունտղենաբանական ուսումնասիրություններով), մյուսների դեղքում դիտարկվել է ցիանոզ, մաշկի գունատություն և տկարություն:

Մեծ մասամբ (62%) այդ բարդությունները լիովին վերացել են կամ ունեցել են աննշան հետևանքներ (աչքերում, քրում ցավ, հազ, փսխում և այլն):

169 սխալներից 151 դեղքի պատճառը եղել է դեղերի փաթեթավորման խնդիրը, որը ևս մեկ անգամ փաստում է, որ **փաթեթավորման որակը կարևոր է դեղի օգտագործման անվտանգության համար:**

*Translated from Rev Prescrire July 2012; 32 (345): 532
Prescribe International November 2012/Volume 21, N 132:269*

ՑԻՆԿԻ ՕՔՍԻԴ. ԱՐՏԵՖԱԿՏՆԵՐ ՄԱՍԻԳՐԱՖԻԱՅԻ ԸՆԹԱՑՔԵՐԻՄ

Զօգտագործել քսուր մամոգրաֆիայից առաջ

2011թ. հոկտեմբերին Մեծ Բրիտանիայի կարգավորիչ գործակալությունը (MHRA) նախազգուշացրեց մամոգրաֆիայից առաջ կարճագուժերին ցինկի օրսիդ պարունակող կրեմներ կամ քսուրներ օգտագործելու մասին:

Ցինկի օրսիդը կարճագուժերի հյուսվածքներում միկրոկալցիֆիկատների պատկեր է ստեղծում, որը կրծքի քաղցկեղի վաղ փուլի ռադիոդիֆիկական նշան է: Տեղային օգտագործման միջոցները, որոնք պարունակում են այլ մետաների աղեր, այդ թվում և հոտազերծիչները նույնականացնելու համար ազդեցություն:

38 տարեկան կնոջ մամոգրամայում հայտնաբերվելեն բազմաթիվ պիրկ գոյացություններ: Նա մաշկին քսել էր ցինկի օրսիդ պարունակող կալամինային լոսյոն: Միկրոկալցիֆիկացիան քացակացում էր հաջորդ մամոգրամաներում, որն անցկացվել էր առանց լոսյոնը լրացնուիչ քսելու:

Հետևաբար ավելի լավ է զգուշացնել հիվանդներին, որ մամոգրաֆիայից առաջ զերծ մնան մաշկին քսվող ցանկացած քսուրը:

ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐԻ ՎՐԱ ՃԻՄՍՎԱԾ ԲԺՇԿՈՒՅՑՈՒՄ

ԽՈՐԱՆԻՄ ԵՐԱԿՆԵՐԻ ԹՐՈՍՔՈԳԻ ԱԽՏԱԴԱՐՁԻ ԿԱՆԽԱՐՁԵԼՈՒՄ

Խորանիստ երակների թրոմբոզի ախտադարձը կանխելու նպատակով սովորաբար կիրառում են հեպարինարուժում՝ հետաքայում այն փոխարինելով վիտամին Կ-ի ներհակորդ վարֆարինով: Ո՞ր գործոններն են որոշիչ թրոմբոզի ռիսկը կանխելու նպատակով հակամակարդից բուժման տևողության համար:

Դպրածային 7 ուսումնասիրությունների տվյալների վերլուծությունը առաջարկում է այս հարցի մի քանի պատասխաններ: Ուսումնասիրվել են 7 դիպ-վածային փորձարկումների արդյունքները, որոնք համեմատել են խորանիստ երակների թրոմբոզի դրվագներից կամ թրային էնրոլիայից հետո վիտամին Կ-ի ներհակորդներով բուժման արդյունքները ընդհանուր առմամբ 2925 հիվանդների շրջանում:

Փորձարկման մասնակիցների միջին տարիքը 61 տարեկանն էր: 1,5, 3, 6, 12 կամ 27 ամիսների ընթացքում հիվանդները ստացել են հակամակարդից բուժում: Վերլուծության ընթացքում ուշադրություն է դարձվել տարիքին, սեռին, փորձարկմանը, դեպքի ախտորոշմանը և թրոմբոզի տեղակայմանը:

Վիտամին Կ-ի ներհակորդներով բուժումն ընդհատելուց հետո 2 տարվա ընթացքում խորանիստ երակների թրոմբոզի ախտադարձի ռիսկը միջին հաշվով տարեկան կազմել է մոտ 8%: 3 և ավելի ամիսների տևականության դեպքում ռիսկը նույն էր, այն դեպքում, եթե 1-1,5 ամսվա տևողությամբ բուժումն ընդհատելուց հետո 6 ամիսների ընթացքում այն 2 անգամ ավելի էր (95% հավանական ընդդիքում՝ 1,4-3,2):

Ախտադարձի նվազագույն ռիսկը դիտարկվել է հեռադիր երակների թրոմբոզով հիվանդների շրջանում (սահմանափակված՝ սրունքի հետին մասի երակով՝ պայմանավորված ժամանակավոր դրվագներով), այնպիսին, ինչպիսիք են վերջերս կատարված վիրարուժական միջանտությունը, զիաստվ վիրակապած ուրքի անշարժացումը կամ հիվանդի հոսպիտալացումը: Այս հիվանդների շրջանում ախտադարձի ռիսկը շարունակում էր մնալ ցածր (երկամյա ուսումնասիրության ընթացքում տարեկան շորջ 2%) նոյնիսկ 1-1,5 ամիս կարճատել բուժման կուրսից հետո:

Կողմնակի ազդեցությունների հաճախականության կապը բուժման տևողությունից չի վերլուծվել: Էրականում արյունահոսության զարգացման ռիսկը մեծ էր հակամակարդից բուժման սկզբնական փուլում, սակայն կուտակային ռիսկը մեծանում է բուժման երկարատևությամբ:

Պրակտիկայում. Խորանիստ երակների թրոմբոզից հետո թրոմբոքոլիայի ախտադարձը կանխելու համար վարֆարինով բուժման օպտիմալ տևականությունը սովորաբար կազմում է 3 ամիս:

Միայն սրունքի հետին մասի խորանիստ երակների թրոմբոզի դեպքում, պայմանավորված ճանաչելի անցողիկ դեպքերով, այնպիսիք, ինչպիսիք են անշարժացումը, հիվանդի հոսպիտալացումը կամ վիրարուժական մի-

ջամտությունը, ախտադարձի ռիսկը փոքր է: Հավանաբար բուժման կարճատև 6-ամյա կուրս անցկացնելու դեպքում հիվանդը ենթարկվում է բրոմբոզի ախտադարձի ոչ ավելի ռիսկի, քան եռամյա բուժման դեպքում: Հավանական է դառնում, որ ինչքան կարծ է վիտամին Կ-ի ներհակողդներով բուժման կորսը, այնքան փոքր է դրանցով պայմանավորված արյունահոսության զարգացման ռիսկը:

*Translated from Rev Prescrire July 2012; 32 (345): 532
Prescribe International November 2012/Volmber 21, N 132:275*

ՏՈԼՊԵՐԻԶՈՆ

Օգուտ-ռիսկի դրական հարաբերակցությունը ներքին ընդունման տոլպերիզոնի միայն հետինսուլտային մկանային ջղաձգությամբ մեծահասակ հիվանդների շրջանում և բացասական՝ տոլպերիզոնի ներարկման ձևի դեպքում

Եվրոպա: Դեղերի եվրոպական գործակալությունը (EMA) խորհուրդ է տալիս սահմանափակել մկանային ապալարիչի՝ **տոլպերիզոնի** կիրառումը, որը 1960-ականներին Եվրամիության որոշ երկրներում բույլատրված էր մի շարք ախտաբանական վիճակներ, այդ թվում՝ նյարդաբանական խանգարումների և ողնուղեղի ու խոշոր անօրների հիվանդություններով պայմանավորված մկանային ջղակծկումներ բուժման համար:

EMA-ն բժիշկներին նաև խորհուրդ է տալիս դեղը նշանակել միայն հետինսուլտային մկանային ջղաձգումներով մեծահասակ հիվանդներին: Անհրաժեշտ է հրաժարվել նաև ներարկման դեղաձներից:

Ներկայում ցանկացած այլ ցուցումով տոլպերիզոն ընդունող հիվանդներին խորհուրդ է տրվում հերթական այցելության ժամանակ բուժող քժշկի հետ ընկած կերպով համապատասխան այլընտրանքային բուժման անցնելու հնարավորությունը: Հիվանդները պետք է զգուշացված լինեն այն մասին, որ տոլպերիզոնով բուժվելու ընթացքում հնարավոր է գերզայնության ռեակցիաների զարգացում: Այնպիսի ախտանիշների զարգացման դեպքում, ինչպիսիք են ցանը, ուժեղ քորը (այտուցվածության գոյացմամբ), շնչահեղձությունը, շնչելու և կլման դժվարությունները, արագ սրտխփոցը, զարկերակային ցածր ճնշումը կամ դրա արագ ամնումը, անհրաժեշտ է դադարեցնել տոլպերիզոնի օգտագործումը և դիմել քժշկի:

Նման հանձնարարականներ ի հայտ եկան Գերմանիայի նախաձեռնությամբ կազմակերպված Մարդկանց համար բուժմթերքների կոմիտեի (CHMP) կողմից անցկացված ուսումնակիրությունների արդյունքում պայմանավորված գերզայնության զարգացման հետշուկայական հաղորդումների առկայությամբ և ըստ մի քանի ցուցումների՝ կիրառելու դեպքում դեղի արդյունավետության անբավարար ապացույցներով:

www.ema.europa.eu, որը բարեկարգ է առ 2012 թ.
WHO Pharmaceuticals Newsletter N 4, 2012

ՕԳԱԼՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԵՈՂ ԹԺԱԿԻՆ

ՊԱԼԱԽՏՈՎ ՀԻՎԱՆԴԵՐԻ ՀԵՏ ՃՓՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԻՆՔ

Պալարախտի զարգացման առավել մեծ ռիսկի խմբի դիտարկում

Անհրաժեշտ է բացահայտել և բուժել այն անձանց, որոնք ակտիվ պալարախտով (տուբերկուլոզով) հիվանդների հետ շփում են ունեցել: Թերև, շարունակական կամ հաճախակի շփում ունեցած անձանց շրջանում պալարախտը կարող է զարգանալ շփումից սովորաբար 2 տարի հետո:

Ինչպիսի՞ն է տուբերկուլոզի կանխարգելման ռիսկ-օգուտի հարաբերակցությունը շփում ունեցած անձանց շրջանում: Այս հարցին պատասխանելու համար անցկացվել է մասնագիտական գրականուրբյան վերանայում՝ օգտագործելով Prescrire-ի ստանդարտ մեթոդաբանությունը:

Թողային պալարախտի բուժման ստանդարտ կանխարգելումը ներառում է՝ **իզոնիազիդով** մենարուժում 6-12 ամիսների ընթացքում: Բուժման այս ռեժիմը ուսումնափրեկտ է պատահական պլացեբո-հսկվող փորձարկումներում, որոնք ներառել են մաշկի դրական տուբերկուլինային թեստով տասնյակ հազարափոր անձանց: Երկամյա ուսումնափրուրյան ընթացքում թոքային պալարախտը զարգացել է՝ իզոնիազիդ ստացած 0,6% հիվանդների շրջանում և 1,7% հսկման խմբում (պլացեբո ստացածներ): Սակայն իզոնիազիդը կարող է առաջացնել լյարդի ծանր ախտահարումներ և բազմաթիվ դեղերի հետ փոխազդեցություններ:

Ո-ֆամազիցինով մենարուժումը բարձր արդյունավետություն էր ցուցաբերել միայն մեկ պլացեբո-հսկվող ուսումնափրուրյան դեպքում սիլիկոզով հիվանդների շրջանում, որոնք պալարախտի զարգացման մեծ ռիսկ ունեին: Ո-ֆամազիցինը նույնական դրսերում է այլ դեղերի հետ փոխազդեցության մեծ ռիսկ, սակայն իզոնիազիդի համեմատուրյամբ այն պակաս հեպատոտոքի է:

Իզոնիազիդ+օ-ֆամազիցին եռամսյա համակցված կուրսը ռիսկ-օգուտ հարաբերակցուրբյամբ ննան է իզոնիազիդով մենարուժման 6-ամյա կամ 9-ամյա կուրսերին:

Ո-ֆամազիցին+իզոնիազիդ համակցությունը իզոնիազիդով մենարուժումից առավել արդյունավետ չէ, սակայն ավելի հաճախ են առաջանում լյարդի ախտահարումներ:

2011թ. Մեծ Բրիտանիայում հրատարակված ուղեցույցներում երաշխավիրվում է հիվանդների հետ շփում ունեցած այն անձանց բուժումը, որոնք ունեն բարնված պալարախտի նշաններ՝ գերազանցապես մաշկի տուբերկուլինային կամ զանախնտերֆերոնի արտազատման դրական թեստեր, և առկա է ակտիվ տուբերկուլոզի զարգացման մեծ վտանգ:

Մեծ Բրիտանիայի նույն ուղեցույցներում բարնված պալարախտի առկայության վերաբերյալ խիստ կավաճների դեպքում 2 տարեկանից մեծ առանց իմունիտեֆիցիտի անձանց համար առաջարկվում է 2 տարբերակ՝ պալարախտի բուժում կամ կրծքավանդակի օրգանների ռենտգենարանական

հետազոտություններ նախնական ախտորոշումից 3 և 12 ամիս հետո:

Պրակտիկայում պալարախստով հիվանդների հետ շփում ունեցած անձանց շրջանում նկատվում է պալարախստի զարգացման փոքր ռիսկ: Բուժումը նվազեցնում է դրա զարգացման վտանգը, սակայն նարդկանց մեծ մասին ենթարկում է բազմաթիվ, երբեմն լորջ կողմնակի ազդեցությունների ռիսկի: 2 տարվա ընթացքում առանց բուժման գգոն սպասողականությունը ամենալավ ընտրույթունն է:

Ստորև ներկայացված են Prescribe-ի երաշխավորումները, որոնք կատարվել են այդ ուսումնասիրությունների հիման վրա:

Պալարախստով հիվանդների հետ շփումը. գգոն սպասողականությո՞ւն, թե՛ առանձին դեպքերի բուժում:

Պալարախստով հիվանդների հետ շփում ունեցած անձանց շրջանում ակտիվ պալարախստի զարգացման ռիսկը զնահատվում է ըստ հիվանդների վարակելիության աստիճանի, մոտիկ, տևական և հաճախակի շփման, ինչպես նաև շփում ունեցածների իմունային համակարգի վիճակի տեղեկության հիման վրա:

Հիվանդի դեղակայուն պալարախստի առկայության, ինչպես նաև այն դեպքերում, երբ շփում ունեցած անձինք տառապում են իմունադեֆիցիտով, հոյի կանայք են կամ 2 տարեկանից փոքր երեխաներ, ծագում են յուրահատուկ խնդիրներ: Այդ դեպքերը չեն բննարկվուն ստորև ներկայացված հոդվածում:

Պալարախստի զարգացման ռիսկի գնահատումը

- **Պալարախստի միայն շնչառական ձևերն են (բոքային կամ կոկորդի) վարակիչ:**
- **Եթե բրոնխիալ արրազարդուկի մանրադիրակային ուղղակի հենրազուրությամբ չեն հայրենաբերում թթվակայուն բացիկներ, և հիվանդի բոքերի ռենտգենագրում չկան խոռոչներ, ուրեմն առկա է վարակի բույլ ասդիման:**
- **Micobacterium tuberculosis բացիկ ներշնչման ռիսկը մեծանում է վարակված հիվանդի անմիջական (տեսօցօ), հաճախակի կամ շարունակական շփման դեպքում: Անեն օրվա ընթացքում մի քանի ժամ ունեցած մուր շփումը զնահակվում է որպես մեծ ռիսկ: Փոքր է ռիսկը մեկ կարճագույն շփման դեպքում:**
- **Պալարախսով վարակվածությունը չի վերածվում ակրիվ պալարախսի ավելի քան 80% դեպքերում:**
- **Ակրիվ պալարախսի զարգացման ռիսկը մեծ է շփում ունեցող որոշ մարդկանց, այդ թվում 5 տարեկանից փոքր և բույլ իմունիֆեկով անձանց շրջանում (հայրեապիս ՄԻՌ-դրական): Ակրիվ պալարախսը սովորաբար զարգանում է շփումից հետո 2 տարվա ընթացքում: Պալարախսային պատվաստանյութի (BCG vaccine) նախորդած կիրառումը ակրիվ պալարախսի զարգացման ռիսկի դեպքում բույլ ազդեցություն ունի 2 տարեկանից մեծերի շրջանում:**

**Դրական մաշկային սուբերկուլյային թեստը ախտանիշներից
միայն մեկն է**

- Մաշկային լրութերկովինային թեստը երեսն կարող է վկայել շփումից հեկո պալարախարի առկայության մասին, մինչդեռ դրա արդյունավելությունը ցածր է, և բացակայում է այն դրական զնահագելու ցուցանիշների վերաբերյալ համաձայնությունը: Բացի դրանից, BCG պարզաբանական թեստը կարող է առաջացնել կեղծ-դրական ռեակցիա, այն դեպքում, եթե իմունադեֆիցիտը, թիրի սևվերը և լուր հիվանդությունները, այդ թվում պալարախարը և մի շարք իմքնեցին հիվանդությունները, ինչպես նաև պարզաբանական թեստը կարող են առաջացնել կեղծ-բացասական ռեակցիաներ:
- Գամա-ինդերֆերոնի արդագարման թեստերը ավելի հուսալի չեն մաշկային լրութերկովինային թեստի համեմատությամբ, բացառությամբ ԵԼՀ-ով պարզաբանական թերի շրջանում դրանց առավել սպեցիֆիկության: Այնուհետեւ, զամանա-ինդերֆերոնի արդագարման թեստերը հնարավորություն են դրախու խուսափելու խնդիրներից, որոնք առաջանում են մաշկային լրութերկովինային թեստը մեկնաբանելու համար պահաջող հեկությունից:
- Մաշկային լրութերկովինային և զամա-ինդերֆերոնի արդագարման թեստերը զգայում են միայն վաղ պալարախարային վարակի հանդեպ, եթե ամցկացվում են շիռումից 8-10 շաբաթ հետո: Բացասական արդյունքը չի բացառում պալարախարի առկայությունը ակրիվ պալարախարի մեծ ռիսկով անձանց շրջանում էական շփումից հետո:

Ակտիվ պալարախստի ախտորոշումը

Թոքային վարակիչ պալարախստով հիվանդների հետ շփում ունեցած անձինք կարող են արդեն ճեղք բերած լինել թոքային կամ արտաքրօքային պալարախստ՝ որպես տևական շփման հետևանք, ինչպես նաև այն պատճառով, որ իրենք նոյնական կարող են լինել վարակի աղբյուր:

Այդ անձինք պետք է հետազոտվեն թոքային պալարախստի ախտանիշները հայտնաբերելու համար (հազ, հոգնածություն, տենտ, գիշերային քրտնարտադրություն, քաշի կորուստ) անհրաժեշտ է անցկացնել նրանց կրծքավանդակի օրգանների նենտգենաբանական հետազոտություն:

Հետազոտություններ 2 տարվա ընթացքում

Նվազագույն շփում ունենալուց հետո առանց իմունադեֆիցիտի 5 տարեկանից մեծ անձանց դեպքում, անկախ մաշկային սուբերկովինային թեստերի արդյունքներից, անհրաժեշտ չել կանխարգելող բուժում կամ հատուկ հետազոտություն անցկացնել:

Եթե առանց իմունադեֆիցիտի անձանց շրջանում վարակի հավանականություն կա, ապա զգո՞ն պաստղականությունը ռացիոնալ ընտրություն է: Բուժումը սկսվում է ակտիվ տոլերկույողի առաջին նշաններն ի հայտ գալուց հետո: Այս մոտեցումը շփում ունեցածների մեծ մասի դեպքում հնարավորություն է տալիս խուսափելու հակապալարախստային կանխարգելման կողմնակի

ազդեցություններից:

Այն դեպքում, եթե նախապատվորյունը տրվում է զգոն սպասողականությանը, խորհուրդ է տրվում 3 ամիս հետո անցկացնել ֆիֆկլական և կրծքավանդակի օրգանների ռենտգենաբանական հետազոտություններ, որից հետո 2 տարվա ընթացքում ամեն տարի:

Զգոն սպասողականությունը խորհուրդ է տրվում այն անձանց շրջանում, որոնք հակապալարախտային կանխարգելման կողմնակի ազդեցությունների զարգացման մեծ ռիսկի խճբում են, մասնավորապես 35 տարեկան անձանց և լյարդի հիվանդությունների առկայության դեպքում: Դա նաև լավագույն մարտավարություն է այն դեպքում, եթե սպասելի է բուժման ռեժիմի խիստ վերահսկողության պակաս, իսկ բուժման մոնիթորինգը ևս խնդրահարույց է:

Կանխարգելող բուժում հասոուկ դեպքերում

Կանխարգելող բուժումը ցուցված է այն դեպքում, եթե առկա է ակտիվ պալարախտի զարգացման մեծ ռիսկ: Բուժման ընտրությունը իզոնիազիդի (300 մգ/օր մեծահասակների և 5-15 մգ/օր երեխաների համար) 6-ամսյա կուրսն է: Իզոնիազիդ+ոփիֆամազիդին համակցությունը կրծքատում է բուժման տևողությունը 6-ից 3 ամսվա, սրա ռիսկ-օգուտ հարաբերակցությունը նման է մենաքուժմանը, սակայն իմմնավորապես գնահատված չէ:

Ինչպես իզոնիազիդի, այնպես էլ իզոնիազիդ+ոփիֆամազիդին համակցության ընդունության հիմք է լյարդի ախտահարման զարգացման ռիսկով: Պետք է պարբերաբար (թեև հետազոտության անցկացման օպտիմալ ռեժիմը դիսլս որոշակի չէ) և լյարդի ախտահարման ախտանշանների (հոգնածություն, սրտխառնոց, փսխում, դեղնախտ) զարգացման դեպքում որոշել շիճուկային տրանսամինագի մասկարդակը:

Պետք է առավել զգուշություն ցուցաբերել այլ դեղերի հետ փոխազդեցության վտանգից խուսափելու նկատարումնով:

*Translated from Rev Prescire 2012; 32 (344):441
Prescire International November 2012/Volumne 21, N 132:270, 274*

ԴՈՐԻՊԵՆԵՄ

Նողոկոմիալ թոքաբորբի դեպքում կարող է անհրաժեշտ լինել առավել մեծ դեղաչափներ

Եվրոպա: Դեղերի եվրոպական գործակալությունը (EMA) հայտարարել է նողոկոմիալ (ներիիվանդանոցային) թոքաբորբով հիվանդների շրջանում դորիակնեմ օգնագործելու նոր երաշխավորությունների մասին: Առձեռն տվյալների վերլուծություն անհանգստություն առաջացրեց այն առումով, որ ներկայուն հաստատված 500 մգ դեղաչափը յուրաքանչյուր 8 ժամը մեկ կարող է անբավարար լինել ներիիվանդանոցային թոքաբորբը, այդ բվում՝ թոքային արհեստական շնչառության հետևանքով զարգացած թոքաբորը բուժելու համար: Հիվանդանոցային թոքաբորի հարուցիչները բակտերիային ծագում ունեն, և դորիակնեմը այն եղակի դեղերից մեկն է, որը ներկայում թիշկների կողմից տնօրինվում է կյանքին սպառնացող այդ հիվանդությունը բուժելու համար:

Երիկամային բարձր քլիրենսով կամ վարակված ոչ ֆերմենտացնող գրամ-բացասական բակտերիաներով հիվանդներին բուժելու դեսպրում Մարդկանց համար բուժմթերքների կոմիտեն (CHMP) խորհուրդ է տալիս կրկնապատկել դորիակնեմին դեղաչափը՝ յուրաքանչյուր 8 ժամը մեկ օգտագործելով 1-ական գրամ: CHMP-ն հաղորդում է նաև այս մասին, որ ներիիվանդանոցային բուժքորով հիվանդներին բուժելու դեպքում, ներառյալ նաև արհեստական շնչառության հետևանքով զարգացած բոքաբորբը անհրաժեշտ է բուժման առավել երկարատև կորու (10-14 օր):

Կոմիտեն նույնական խորհուրդ է տալիս պահպանել հասողություն այն հիվանդների բուժման դեպքում, որոնց հիվանդության ենթադրվող կամ ապացուցված հարուցիչները ոչ ֆերմենտացնող գրամբացասական այնպիսի բակտերիաներ են, ինչպիսիք են Pseudomonas aeruginosa-ն և Acinetobacter-ը: Այս հիվանդների համար պետք է ի սպասնե նախատեսել անհնողիկողիդներով համակցված բուժման տարրերակը:

Դորիակնեմը կիրափում է նաև որովայնային խոռոչի և միզուղիների բարդացած վարակները բուժելու համար: Վերուծությունների հիման վրա արված երաշխավորումները այս ցուցումներին չեն վերաբերում:

WHO Pharmaceuticals Newsletter N 4, 2012

ԹԺԱԿՈՒԹՅԱՆ ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՈՍԿՐԵՐԸ ՄԻԱՀՅՈՒՄԵԼՈՒ ՈՒՆԱԿ ՍՈՍԻՆՁ

Կոտրած ձեռքը կամ ոտքը շուտով հնարավոր կլինի սունձել: Թագավորական տեխնոլոգիական ինստիտուտի շվեդ գիտնականները վիրաբուժության բնագավառում հեղափոխական բացահայտումների շեմին են:

14 տարի նրանք աշխատել են յուրատեսակ սովորն ստեղծելու ուղղությամբ: Սովորն քսում են կոտրվածքի տեղում, և հալոգենային լամպի ազդեցությամբ կոտրվածքը ամրանում է: Ուսկրերը կաշելուց հետո սովորն ներծծվում է: Այսպիսով, ամենաբարդ, այդ քսում ողնաշարի և գանգոսկրի կոտրվածքները հնարավոր կլինի բուժել առանց մետաղի թիթեղների և տեղային անօգայացման պայմաններում:

Նոր մեթոդը հնարավորություն կտա կրծատելու ինչպես վիրահատության ժամանակը, այնպես էլ վերականգնման պրոցեսը: Եթե նախկինում այն գրադեցմում էր մոտ երեք ամիս, ապա տվյալ դեպքում հիվանդն արդեն 3 օրից կարող է աշխատանքի գնալ:

Սուսնձի բունաբանական հետեղություններն ավարտելուց հետո այն կփորձարկվի կենդանիների վրա: Գիտնականները վստահ են, որ եթե ամեն ինչ հաջող ընթանա, ապա նման միջամտությունները հնարավոր կլինի իրականացնել արդեն այս տարի:

MIGnews.com

ԵՐԵԿԱՅԻՆ ԼՈՒՅԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀՂԻՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԼԱՎԱՅՆՈՒՄ Է ԵՐԵԽԱՅԻ ՏԵՍՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Լույսը աչքերին անհրաժեշտ է ոչ միայն այն պատճառով, որ տեսնեն: Համաձայն միջազգային գիտնականների խմբի նոր հետազոտությունների՝ ցերեկային լույսի ազդեցությունը խիստ անհրաժեշտ է պտղի համար դեռևս մոր արգանդում նրա տեսողության զարգանցման համար:

Երեխայի տեսողական ֆունկցիայի զարգացումը պայմանավորված է նրանով, թե որքան հաճախ է մայրը լինում արևի տակ:

Գիտնականների կողմից ստացված այս արդյունքները բժշկությանը տալիս են բազային նոր հասկացություններ աչքի զարգացման և անորային խանգարումներով պայմանավորված աչքի հիվանդությունների սրացման մասին:

Ցինցինատիոնի Բժշկական կենտրոնի մանկական հիվանդանոցի Կալիֆորնիայի նահանգի համալսարանի գիտնականների կողմից անցկացված հետազոտությունները և Nature ամսագրում հրատարակված հոդվածները բացահայտեցին ռետինոպարիայի զարգացման մեծ վտանգը այն երեխաների շրջանում, որոնց մայրերը շատ ժամանակ են անցկացրել արևային լույսով թիշ լուսափրված տեղերում: Այդ վիճակը բացահայտ է անդրադառնում երեխաների

տեսողության ձևավորմանը, մասնավորապես կարող է հանգեցնել կորուրյան:

«Դա արմատապես փոխում է մեր հասկացողությունը աշքի ցանցաքարանքի զարգացման մեխանիզմների մասին: Մենք որոշակիացրել ենք լույսի ազդեցության ուղիները, որոնց հետևանքով օրգանիզմը կարգավորում է ցանցաքարանքի նեյրոնների քանակը: Այս պրոցեսները վճռական են ակնագնդի անորային համակարգի ձևավորման գործում, որը կարող է քաջապատկել կամ, հակառակը, նվազեցնել անորային մի շարք հիվանդությունների զարգացումը», – նշում է հետազոտության պաշտոնական հաշվետվության մեջ:

Գիտնականների հիմնավորում են իրենց երակացությունները մկների վրա անցկացրած մի շարք թեստերով: Նրանք հաստատել են, որ ծննդաբերությունից հետո կենդանիների աչքերը, ինչպես և մարդունը, զարգանում են մի քանի փուլով: Դրանցից մեկի ընթացքում օրգանիզմը որոշում է ֆուտոնների քանակի նշանակությունը, որը վերջնակետի հասնում է մոր օրգանիզմի հղիության ուշ ժամկետներում: Ակների դեպքում այդ ժամանականքացքը համընկնում է հղիության ուշ ժամկետներիմ սկսվելով 16-րդ օրից հետո, որը մարդու դեպքում համարեք է երրորդ եռամյակին: Ֆուտոնները ազդում են **մելանոսին** սպիտակուցի արտադրման վրա, որով պայմանավորված է ծնվելու ժամանակ աշքի արյունատար անորոշների զարգացման աստիճանը:

Սպիտակուցի ֆունկցիաներից մեկն էլ արյունատար անորոշների աճը սահմանափակելի է: Երբ սպիտակուցը շատ քիչ է, ցանցաքարանքի անորոշները զարգանում են զրեթե առանց խոշընդոտների: Դրանց զարգացումը հանգեցնում է ռետինոպարիայի: Մի վիճակ, որը ուժեղ ճնշում է առաջացնում աշքերի վրա և ծանր դեպքերում հանգեցնում լորջ վնասվածքների՝ տեսողության վատացման և կորուրյան: Եթե մայրը քիչ ժամանակ է անցկացնում արևի տակ, ապա այդ վիճակի ռիսկը սկսում է համանասնորեն մեծանալ:

Ըստ *Medical News Today*-ի նյութերի. Medlinks.ru

ՊԱՏՎԱՍՏՎԱԾ ԵՐԵՒԱՆԵՐԸ ԱՎԵԼԻ ԵՒ ՀԱԿՎԱԾ ՈՐՈՇ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆԸ

Որոշ հիվանդությունների դեմ պատվաստանյութերը կարող են մեծացնել այլ հիվանդությունների զարգացման ռիսկը: Այս անսպասելի հետևողյանն են հանգեցնում գերմանացի գիտնականները: Նոր աշխատանքը կազմակերպվել է «Առողջության ազատության՝ այլան» հասրակական կազմակերպության կողմից:

Նրանում հիմնավորվել է, որ համաձայն կառավարության պաշտոնական գրաֆիկի՝ պատվաստված երեխաները մի շարք հիվանդությունների զարգացման 5 անգամ մեծ հնարավորություն են ունեցել, որոնցից պատվաստանյութը նրանց շի պաշտպանել: Նրանց արդյունքները համեմատվել են նույն բնակավայրում, ճիշտ նույն պայմաններում ապրող երեխաների տվյալների հետ, որոնք այս կամ այն պատճառով հրաժարվել են պատվաստանյութից:

Հետազոտությունը ներառել է 8000 պատվաստված և նույնքան չպատվաստված երեխաների, և մասնակիցների քիչ քանակության պատճառով

տվյալներն առայժմ չեն կարող ընդունվել որպես պաշտոնապես ապացուցված: Գիտնականները նշում են, որ տվյալ թեմայի վերաբերյալ անհրաժեշտ են առավել լայնածավալ հետազոտություններ՝ պատվաստուկներից բոլոր ոխսկերի համարդրություններն առավել տեսանելի դարձնելու համար:

Դրանով հանդերձ՝ գիտնականները հիշեցնում են, որ պատվաստամյուրի մեծ մասը չի հետազոտվում հետաձգված կողմնակի ազդեցությունների, այդ թվում իմունիտետի նվազման առկայության ուղղությամբ, որն անթույլատրելի է. չ” որ ամբողջ աշխարհում օրական գրիպի նույն պատվաստանյուրից կիրառվում է մի քանի միլիարդ սրբակ:

Եթե ենթադրվում է, որ պատվաստամյուրի այդպիսի կողմնակի ազդեցությունները ունի, ապա դրա կիրառման հետևանքների մասշտաբը իրականում ապահովության կիմնի: Համաձայն հետազոտությունների վերջնական վիճակագրության՝ պատվաստված երեխանները չպատվաստվածների համեմատ գրեթե երկու անգամ հաճախ են հիվանդացել նեյրոդերմիտով:

Ծիծու այդպես և պատվաստված երեխանները մոտ երկուսուկես անգամ հաճախ են հիվանդացել միգրենով: Այսմայի և բրոնիկական բրոնխիտի այդ ռիսկը մեծ էր 8 անգամ:

Գերակտիվության, խոտածենդի և վահանածն գեղձի հիվանդությունների ռիսկը մեծացել էր երեք, չորս և տասնյոթ անգամ:

Հետազոտությունների մասշտաբը հնարավորություն չտվեց նման եզրակացություններ անելու առաջիկմի զարգացման վերաբերյալ: Պատվաստված երեխանների խմբում առտիզնը զարգացել էր չորս դեպքերում, իսկ չպատվաստված երեխանների խմբում այդպիսի դեպքեր չեն եղել:

Ներկայում Գերմանիայում բնակչության շրջանում առուժիկմի տարածվածությունը 1,1% է: Այսպիսով, պատվաստված երեխանների խմբում այն նորմալ ցուցանիշներից երկուսուկես անգամ ավելի էր:

Ըստ Medical News Today-ի նյութերի. Medlinks.ru

ԶԱՆԱԶԱՆ ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹԵՐԻ ՀԱՄԱԿՅՈՒԹՅՈՒՆ-ՆԵՐԸ ՍՊԱՆՈՒՄ ԵՆ ԵՐԵԽԱՆՆԵՐԻՆ

Վերջին 20 տարիների ընթացքում ԱՄՆ-ում զանազան պատվաստամյուրերի համակցություններ կիրառելու հետևանքով գրանցվել են 145 000 բացարձակ առողջ երեխանների մահվան դեպքեր. հաշվել է Փորձագիտական հասարակական անկախ կազմակերպության կողմից (Vaccine Adverse Events Reporting System -VAERS):

Հոգկածի հեղինակները նշում են, որ այս տարիների ընթացքում պատվաստությունների գրաֆիկը խստ փոփոխվել է, և կիմա մինչև 6 տարեկան երեխանները ստանում են 30-ից ավելի զանազան համակցված պատվաստամյուրեր: Շատ դեպքերում բժիշկները և բուժքույրերը երեխաններին ներարկում են 6 և ավելի պատվաստանյուր միաժամանակ, որպեսզի համոզված լինեն, որ նրանք ստանում են ամենաանհրաժեշտ բոլոր պատվաստուկները, որը նշանակում է նաև սեփական ժամանակի խնայողություն: Եվ միայն ծննդներից քչերը գիտեն

այս ապշեցնող փաստի մասին:

Վերջերս Human & Experimental Toxicology ամսագրում հրատարակված հետազոտության մեջ վերլուծվել է 1990-2010 թթ. ընթացքում պատվաստուկներով պայմանավորված հոսպիտալացումների և մահվան դեպքերի ընդհանուր թիվը, և այդ տվյալները համեմատվել են երեխաներին առանձին-առանձին կատարած պատվաստումների թվի հետ: Այլ կերպ ասած, համեմատել են մեկ, երկու (այդպիսով հասնելով ուրի) դեղաչափերից առաջացած հոսպիտալացման և մահվան դեպքերի քանակը:

Փորձագետները վարդու արդեն կասկածներ են ունեցել միաժամանակ մի քանի պատվաստանյութերի կիրառման անգուշակելի հետևանքների մասին: Պատվաստանյութերը արտադրող ընկերությունները ավանդաբար նման հետազոտություններ չեն անցկացնում, այդ պատճառով էլ փաստորեն ոչ ոք չի կարող հավաստել այդպիսի համակցությունների անկուսանգությունը:

Վերլուծությունների ընթացքում բիմը եկավ հետևյալ եզրակացության. որքան շատ պատվաստանյութ է երեխան ստանում բժշկի մեկանգամյա այցելության ժամանակ, այնքան մեծ է կողմնակի ազդեցությունների զարգացման հավանականությունը, որոնք կարող են մահացու ելք ունենալ: Հատ Gaiā Health հիվանդանոցի բժիշկ Հայր Մթիվենսոնի՝ յուրաքանչյուր պատվաստանյութից մահվան ելքի ռիսկը մեծանում է 50%-ով, իսկ լուրջ բարդությունների պատճառով հոսպիտալացման հավանականությունը մեծանում է երկու անգամ: Եզրակացություն կատարելով՝ հետազոտության հելինակները նշում են, որ պատվաստանյութերի համակցված դեղաչափերն անմիջականորեն կապված են հոսպիտալացման և մահվան ռիսկերի հետ, որի մասին բժիշկները պարտավոր են հայտնել ծնողներին: «Համենայն դեպք, նրանք իրավունք ունեն պատվաստումից հրաժարվելու: Հնարավոր է, որ հիմա որոշ անձինք այդպիս էլ կվարվեն», – եզրակացնում են մասնագետները:

Ըստ Medical News Այութերի. Medlinks.ru

ՄԵՐ ՇՐԱՏԱՐԱԿՈՒՄՆԵՐԸ

ԶԱՆԱԶԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐՈՎ «ԱՐՄԵՆԻԿՈՒՄ» ԴԵՂԻ ՍԱՅՄԱՆԱՓԱԿ ԿԼԻՆԻԿԱԿԱՆ ՓՈՐՁԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԸՆԴԱՐԱՑՈՒՄԸ

Օհանյան Տ. Գ., Ստեփանյան Մ. Մ., Սարգսյան Վ. Ա., Պեպանյան Ա. Ա.
«Արմենիկում» ՓԲԸ

«Արմենիկում»-ը յուրահատուկ դեղ է, որն արտադրվում է «Արմենիկում+» ՓԲԸ-ի կողմից (Հայաստանի Հանրապետություն): Այն բազմաբաղադրային քիմիական տարրերով բարդ դեղ է, որը պարունակում է յոդ, կալիում, լիքիումի քլորիդ, ջրում լուծվող սինթետիկ պոլիմեր, մոնոսախարիդներ, օլիգոսախսարիդներ և պոլիսախսարիդներ: Ֆիզիկաքիմիական ցուցանիշներով «Արմենիկում»-ը կորոիդ-պոլիմերային ջրալույժ առերի և ցածրամոլեկուլային օրգանական միացություն է: «Արմենիկում»-ի բաղադրությունը առաջին անգամ հայտարարվել և պաշտպանվել է 10.06.2001թ. ՀՀ Նո 949 արտոնագրով և 26.02.2004թ. Նո 004203 եվրասիական արտոնագրով՝ որպես հակաՄԻՎ միջոց ներերակային ինֆորմայի համար: Դեղի փորձագիտական և կիմիկական ուսումնասիրությունների արդյունքները հրատարակվում են՝ սկսած 2000 թվականից [1,2]: Առաջին անգամ «Արմենիկում»-ը գրանցվել է 1999թ. Հայաստանում սահմանափակ քվով (մինչև 100) հիվանդների կիմիկական փորձարկումների հիման վրա, որը բույլատրելի է հակաՄԻՎ դեղերի դեպքում՝ հաշվի առնելով դրանց առաջնահերթությունը դեղակարգավորման տեսակետից:


2004-ին անցկացվեց դեղի կրկնակի գրանցում՝ ներկայացնելով ավելի քան 1000 հիվանդների կիմիկական ստուգիչ փորձարկումների արդյունքներ, որոնք արձանագրվել են՝ կիմիկական պատշաճ գործունեությանը համապատասխան (GCP): Դեղի կիմիկական փորձարկումներն անցկացվել են՝ սկսած 1998-ից Հայաստանում (157 հիվանդ), Ուսուաստանի Դաշնությունում (100 հիվանդ), Ուկրաինայում (80 հիվանդ), ինչպես նաև Հնդկաստանում, Կոնգոյում, Չամբիայում և Լիբերիայում: 2006-ին «Արմենիկում»-ը գրանցվել է Ուսուաստանում: Բացի Հայաստանից և Ուսուաստանից, դեղը նաև գրանցվել է Ուկրաինայում, Հնդկաստանում, Կոնգոյում, Չամբիայում և Լիբերիայում:

Հայաստանում և մի շաբթ այլ երկրներում դեղը պաշտոնապես գրանցվել է որպես «հակավիրուսային և իմոնամոդուլացնող դեղամիջոց» ցուցումներով:

ՀՀ-ում գրանցվելուց հետո «Արմենիկում» (կոնցենտրատ) դեղի սահմանափակ կիմիկական փորձարկումներն անցկացվել են մի շաբթ


հիվանդություններ բուժելու համար: Վիճակագրական վերլուծության համար կիրառվել են ոչ պարամետրիկ մեթոդներ՝ Վիկոնկունի զոյգ չափանիշներ և Վիկոնկուն-Մաննա-Վիթնի չափանիշներ:

1. ՄԻՎ-վարակ: Հետազոտություններն անցկացվել են «Արմենիկում» կլինիկական կենտրոնում 173 հիվանդների շրջանում (2001թ.) և Սամվո-Պետերբուրգի Ս. Պ. Բուտկինի անվան N30 ինֆեկցիոն հիվանդանոցում 18 հիվանդների շրջանում (2005թ.): Բացի դրանից, «Արմենիկում» կլինիկական կենտրոնում 2004-2009թթ. հետազոտություն է անցկացվել 74 հիվանդների շրջանում: Նատրիումի քլորիդի ֆիզլուծույթը դեղի հետ նախնական խառնելուց հետո (1:4; 1:25), որը կատարվել է անմիջապես ներմուծումց առաջ, ներմուծվել է ներերակային կարիւային 0,3մգ/կգ դեղաչափով 4-9մլ/ր արագությամբ: Դեղի բուժական մեկ կուրսը կազմել է 3 ներարկում (օրընթեք մեկ ներարկում): Դեղի բուժական ինֆուզիոն կուրսը կրկնվում է 3-4 անգամ 3 շաբաթ ընդմիջումով, որը մի քանի տարվա ընթացքում ապահովում է կայուն ազդեցություն: Հիվանդները արագ վերադարձել են ակտիվ կյանքի, վերականգնվել է աշխատունակությունը, նրանք ճեղք են բերել կենսական ակտիվ դիրքքորոշում: Վիրուսային ծանրաբեռնվածությունը, դրանով հանդերձ, պահպանվում էր ցածր մակարդակի վրա: Բոլոր երեք հետազոտություններում ստացվել են համանման արդյունքներ՝ դա բարձր ելքային վիրուսային ծանրաբեռնվածությունը հիվանդների շրջանում, որը հասնում էր $\log_{10} VL > 4$, այսինքն՝ ավելի քան 10 հազար կոպ/մլ, վիրուսային ծանրաբեռնվածության վիճակագրութեն հավաստի նվազումը CD4+T լիմֆոցիտների քանակի ավելացումը և հիվանդների կյանքի որակի բարելավումը (նկ. 1-3) [3,4]:




Նկ. 1: «Արմենիկում» դեղով բուժելուց հետո ելքային $\log_{10} VL = 4.5$ մակարդակով ՄԻՎ-ինֆեկցիոն հիվանդների վիրուսային ծանրաբեռնվածության ($\log_{10} VL$) փոփոխությունը:

- ** - Վիճակագրողեն հավաստի $p<0,01$ Ելքային մակարդակի հետ
համեմատելիս (0 ամիս),
* - Վիճակագրողեն հավաստի $p<0,05$ Ելքային մակարդակի հետ
համեմատելիս (0 ամիս),
*0 - Վիճակագրողեն անհավաստի Բոևֆերոնի շտկումներից հետո:



Նկ. 2: Ելքային $\log 10 VL > 4$ մակարդակով 40 տարեկանից փոքր ՍԻՎ-ինֆեկցիոն հիվանդների վիրուսային $\log 10 VL$ ծանրաբեռնվածության փոփոխությունը:

- Pn(3-6) – հետազոտություն չորս ամիսների ընթացքում (3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ ամիսներ),
 Pn(3-8) – հետազոտություն վեց ամիսների ընթացքում (3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ և 8-րդ ամիսներ),
 Pn(3-9) – հետազոտություն յոթ ամիսների ընթացքում (3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ և 9-րդ ամիսներ):




ամիսներ

Նկ.3: «Արմենիկում» դեղով բուժվելուց հետո ՍԻՎ-ինֆեկցիոն հիվանդների բուժման 2-րդ փուլում T-լիմֆոցիտների CD4+-ի քանակի փոփոխությունը:

*** - Վիճակագրորեն հավաստի $p<0,001$ ելքային մակարդակի հետ համեմատելիս (0 ամիս):


2. **Քրոնիկական հեպատիտ C.** «Արմենիկում» կլինիկական կենտրոնում դեղի կոնցենտրատը ներմուծվել է 39 հիվանդների շրջանում [5]: Դիտարկվել է վիրուսային ծանրաբեռնվածության հավաստի նվազում ($\log_{10}VL$), ինչպես նաև ԱլԱՏ և ԱսԱՏ կենսաքիմիական ցուցանիշների հավաստի նվազում (նկ. 4):



Նկ. 4: «Արմենիկում» դեղով բուժվելուց հետո քրոնիկական հեպատիտ C-ով հիվանդների վիրուսային ծանրաբեռնվածության ($\log_{10}VL$) փոփոխությունը:

խումբ 1-ին՝ հիվանդների ընդհանուր խումբ,
խումբ 2-րդ՝ 9 և ավելի ինֆուզիա ստացած հիվանդներ,
խումբ 3-րդ՝ 6 ինֆուզիա ստացած հիվանդներ:

3. **Համակարգային կարմիր գայլախոց:** «Արմենիկում» դեղի (կոնցենտրատ) պիլոտային հետազոտությունն անցկացվեց 22 կամավորների շրջանում, որոնք ինֆանդ էին համակարգային կարմիր գայլախոտով [6]: Հետազոտությունն անցկացվեց «Էրեբունի» ԲԿ-ի հետ համատեղ (Ա. Ա. Արյոյան, Ն. Ռ. Մկրտչյան): Դեղը ընդունելուց հետո դիտարկվեց հիվանդության ակտիվության միջին միավորների հավաստի նվազում՝ ըստ SLAM սանդղակի: Տարեկան հետազոտությունների ավարտին 15 ինֆանդների (71,4%) դեպքում հաջողվեց բուժումը փոխարինել պլեղմիդոլունով (նկ. 5):




Նկ. 5: «Արմենիկում» դեղը ընդունելուց հետո համակարգային կարմիր գայլախոտով ինֆանդների ինֆանդության ակտիվության միջին միավորների փոփոխությունը՝ ըստ SLAM սանդղակի:

4. **H1N1 գրիպ:** Հայաստանում գրիպ ինֆանդության բռնկումից հետո անցկացվել են սահմանափակ հետազոտություններ՝ հակավիրուսային հայտնի դեղի՝ օգելսամիկլիրի (տամիֆլյու) համեմատությամբ [7]: «Էրեբունի» ԲԿ-ի վերակենդանացման տարրեր բաժանմունքներում 2009թ. նոյեմբերի 16-ից մինչև 2010թ. հունվարի 16-ը գրիպ H1N1 ախտորոշմանը ընդունվել են 48 ինֆանդներ, որոնք ծանր վիճակում են եղել: Նրանք ստացել են հետևյալ բուժումները՝

- *I-ին խումբ (38 ինֆանդ)՝ հակամիկրոբային և հակավիրուսային բուժում (ֆլորիինոլոն/ցհ.ֆուպերազոն + օգելսամիկլիր 300մգ/օր),*

- 2-րդ խումբ (10 հիվանդ)՝ հակամիկրոբային և հակավիրուսային բուժում (ֆիռոբիսնոլոն/ցիֆուլեռազոն + օգհելքամիվիր 300մգ/օր + «Արմենիկում» (կոնցենտրացիա) մ/է 0,25մլ/կգ 3 ներարկում (1,2,4 օրերին):



Նկ. 6: H1N1 գրիպով հիվանդների մահացության տոկոսային փոփոխությունը՝ «Արմենիկում» դեղով բուժվելու դեպքում:

1. հիվանդների խումբ, որոնք ստացել են հակամիկրոբային և հակավիրուսային բուժում,
2. հիվանդների խումբ, որոնք ստացել են հակամիկրոբային և հակավիրուսային բուժում, ինչպես նաև «Արմենիկում»:

Գրանցել են մահացության ցուցանիշների հետևյալ արդյունքները՝ 1-ին խումբ (38 հիվանդ)՝ 13 մահ (34,2%),

2-րդ խումբ (10 հիվանդ)՝ 2 մահ (20%) (նկ. 6):

Բացի դրամից, «Արմենիկում» ստացած հիվանդների խճրում դիտարկվել են հետևյալ դրական փոփոխությունները՝

- արյան գագային բաղադրության նորմալացում (12-16 ժամ ամ 1 իմֆուզիայից հետո),
- լեյկոցիտների մակարդակի նորմալացման միտում (18-24 ժամ հետո),
- արիեսլական շնչառության գրեռողության կրծակում, շնչառական օգնության անհրաժեշտության խոսափում (4 հիվանդների դեպքում),
- ռենտգենարանական դինամիկայի դանդաղեցում,
- էսկան կողմնակի երևույթների բացակայում [7]:

Գրականություն (տես Էջ՝ 72)